



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3075

891.99

2-43

XVI 2

406294

17-8 7 311401 12 սիպտ. 1900  
ԳԷՈՐԳ ԴՆՍՈԳՆԵՆՑ  
3075  
391.39  
12-43  
6 NOV 2011  
այ

# ԳԱԼՈՒՍՏԻ ԵՒ ՇՈՒՇԱՆԻԿԻ



ՊՍԱԿՈՒԵԼԸ



1001  
9263

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԵՏԿԵՐ

(ԱՂԷՐՍԱՆԴՐԱՊՕԼԻ ԿԵԱՆՔԻՑ)



ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՕԼ  
Արագաշիպ-Տպարան Յովհ. Ափինեանցի

1904

(20)

19 JUN 2013

NOV 2011

3072

Handwritten text in Georgian script, likely bleed-through from the reverse side.

Handwritten text in Georgian script, likely bleed-through.



Дозв. Цензурою 2-го Августа 1904 г. гор. Тифлисъ.



**უბიერ**

ორ ანბანი

**სანაწიბელი**

მოდ. ჯანსიხუ. ყირიყირბანი


**ბსაბბანი**

სამთავროს ქიჯათი

სეკრეტის.

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Ներկայ գրգոյկը առաջարկվում է ընթերցող հասարակութեանը ոչ որպէս հոգեբանական խնդիրների վերլուծութիւն, հետևաբար ոչ որպէս գեղարուեստական մի գործ, այլ ինչպէս մի նրկարագիր տեղական քաղքերի: Գրողի նպատակը եղել է արձանագրել հետզհետէ հնացող սովորութիւնները, ուստի աշխատել է ուղիղ կերպով ամփոփել մեր քոյոր հարսանեկան ծէսերը եւ սովորութիւնները: Օրէցօր մենք սկանաւտս վկայ ենք սլապենական հին սովորութիւնների փոփոխութուն. երեկուայ գործածականը այսօր կամ վերացել է կամ նորերի հետ խառնուել եւ կազմել մի կատարեալ ամենեղանակութիւն:



Կիրակոսեան Պօղոս աղան բազարի սաա-  
ուաւոր վաճառականներից մէկն էր.  
Նա թէև հայրական ոչինչ չէր տեսել,  
բայց իւր համբերող և տոկուն բնաւորութեամբ, բը-  
շից սկսելով և միւս կողմից խնայող կեանք վարե-  
լով ունէր ընդարձակ կարողութիւն: Նրա խանու-  
թի գրացիները միշտ խէթ աչքով էին նայում նրա  
վրայ և կարծում էին, որ նա արդէն թիշը-թիշը բա-  
ռասուն-յիսուն հազարի տէր էր:

Աշնան գեղեցիկ օրերից մէկում, օրուայ յաջող  
առևտրից գոհ, սովորականից վաղ կողպեց խանու-  
թը, աշակերտներին տուն ուղարկեց, պատուիրելով  
վաղը շուտ գալ, իսկ ինքը բանալիքը գրպանը դնե-  
լով, մտքումն էլ անգիր արած աղօթքը շնջելով,  
գնաց դէպի տուն, սր գտնուում էր բազարի Ս. Նը-  
շան եկեղեցու մօտերը:

Բնականից բարեպաշտ մեծացած լինելով, սօ-  
վորութիւն ունէր եկեղեցին յաճախել, մի երկու-  
մսմ գնել և ուխտ անել: Այս անգամն էլ, երբ նա

մօտեցաւ Աստուածածին եցեղեցուն, տեսնելով որ խորանը բաց է, մտաւ աղօթք անելու, մի երկու ծունր դնելու: Մօտենալով ժամակոչի սեղանին, տուեց նրան մի արծաթէ գրամ ու գնեց մի գոյգ մամ: Ժամակոչը, որ միշտ պարտաւորութիւն էր համարում գնողներին հետ խօսել, նկատեց.

— Ազն, լաւ շուտ ես խանութդ փակել:

— Հն, այսօր թիշ տանը գործ ունիմ:

Այսօր, որքան որ Աստուած կամեցել էր առուտուր արի, բաւական է. մտածեցի, առաւօտի շաւր երեկուայ խէրից լաւ է: Այս ասելուց յետոյ, նա մտաւ ներս, ուր օրուայ այդ պահին բազմաթիւ աղօթողներ են լինում երկու սեռից, նա ձեռքերը շարքերը, մօտեցաւ սեղանին, մոմերը տուեց բահնային վառելու, ինքն էլ մի երկու ծունր աղօթք արաւ ու դուրս եկաւ:

Տուն համեկով, երեք անգամ խփեց դռան թակը, որ շատ շանցած՝ խկոյն բացուեց նրա առաջին: Տեսնելով որ բազում կրակ չէ վառած, նկատեց ծառային.

— Այ օրդի, ինչն լամբը չէր վառել, չէ որ մութն է. ես ասել եմ, որ երբ լուսնկայ գիշեր լինի և լուսնի լոյսը ներս կ'ընկնի, այն ժամանակ մի ր վառի: Գալուստը տուն եկել է, աւելացրեց Պօղոս ազան:

— Այն, նա իր սենեակում գիրք է կարգում: Գալուստը Պօղոս ազանի միակ սրբին էր. նա

արդէն քսանչորս տարեկան էր, բայց դեռ ամուսնացած չէր: Պօղոս ազան, որպէս ընտանեւէր ծնող, շատ սիրում էր իւր որդուն, որովհետեւ դեռ այդ հասակում ոչ մի օր հօլը չէր գայրացրել, միշտ հնազանդ էր և միշտ հեռու ընկերութիւններից: Պօղոս ազան ամեն կերպով գոհ էր որդուց: Այն օրից, որ նա տեղական դպրոցն աւարտեց, հայրը տարաւ խանութ, որ թիշ-թիշ գործին ընտելանայ, առևտուրը սովորի, մուշտարիներ ճանաչի:

— Միակ ժառանգս է, քանի կենդանի եմ, պէտք է մեծանայ ձեռքիս տակ. գործերս կառավարէ, սով գիտէ, գուցէ շուտով կըմեռնիմ, այն ժամանակ էլ նեղութիւն չի կրի:

Հայրը հրամայում էր, կարգադրում էր այս տալ, այն առնել, իսկ որդին լուռ անձայն, համեստ հարսի նման կատարում էր հօր պատուէրը: Պօղոս ազան շատ անգամ գոհ օրտով խանութի անկիւնում նստած դիտում էր, թէ ինչպէս որդին անուշ վարմունքով, մուշտարիներին էր ճամփում:

Այդ պատճառով մտրւում ասում էր.

— Որդիս ինձանից յետոյ խեղճ չի լինիլ, նըշաններից երևում է, որ լաւ վաճառական է լինելու և իմ աշխատանքս չի վասնիլ.

Երբ սենեակ մտաւ, տեսաւ կնոջը նստած բագմոցի վրայ, գուլպա գործելիս: Գինը ամուսնու վայտուն գալը տեսնելով հարցրեց.

— Ինչն այսպէս շուտ տուն գարար.

մօտեցաւ Աստուածածինն եցեղեցուն, տեսնելով որ խորանը բաց է, մտաւ աղօթք անելու, մի երկու ծունր դնելու: Մօտենալով ժամակոչի սեղանին, տուեց նրան մի արծաթէ գրամ ու գնեց մի գոյգ մօմ: Ժամակոչը, որ միշտ պարտաւորութիւն էր համարում գնսղների հետ խօսել, նկատեց.

— Աղա, լաւ շուտ ես խանութիւ փակելի:

— Հա, այսօր բիշ տանը գործ ունիմ:

Այսօր, որքան որ Աստուած կամեցել էր առուտուր արի, բաւական է. մտածեցի, առաւօտի շաւր երեկուայ խէրից լաւ է: Այս ասելուց յետոյ, նա մտաւ ներս, ուր օրուայ այդ պահին բազմաթիւ աղօթողներ են լինում երկու սեռից, նա ճղեց նրանց շարքերը, մօտեցաւ սեղանին, մտները տուեց բահահային վառելու, ինքն էլ մի երկու ծունր աղօթք արաւ ու գուրս եկաւ:

Տուն հասնելով, երեք անգամ խփեց դռան թակը, որ շատ շանցած՝ խկոյն բացուեց նրա առաջին: Տեսնելով որ բազում կրակ չէ վառած, նկատեց ծառային.

— Այ որդի, ինչո՞ւ լամբը չէք վառել, չէ որ մութն է. ես ասել եմ, որ երբ լուսնկայ գիշեր լինի և լուսնի լոյսը ներս կ'ընկնի, այն ժամանակ միք վառիլ: Գալուստը տուն եկել է, աւելացրեց Պօղոս աղան:

— Այն, նա իր սենեակում գիրք է կարդում: Գալուստը Պօղոս աղայի միակ սրբին էր. նա

արդէն քսանչորս տարեկան էր, բայց գեռ ամուսնացած չէր: Պօղոս աղան, որպէս ընտանեակը ծնող, շատ սիրում էր իւր որդուն, որովհետեւ գեռ այդ հասակում ոչ մի օր հօրը չէր գայրացրել, միշտ հնազանդ էր և միշտ հեռու ընկերութիւններից: Պօղոս աղան ամեն կերպով գոհ էր որդուց: Այն օրից, որ նա տեղական գարսցն աւարտեց, հայրը տարաւ խանութ, որ բիշ-բիշ գործին ընտելանայ, առևտուրը սովորի, մուշտարիներ ճանաչի:

— Միակ ժառանգս է, բանի կենդանի եմ, պէտք է մեծանայ ձեռքիս տակ. գործերս կառավարէ, սիլ գիտէ, գուցէ շուտով կըմեռնիմ, այն ժամանակ էլ նեղութիւն չի կրիլ:

Հայրը հրամայում էր, կարգապրում էր այս տալ, այն առնել, խի որդին լուռ անձայն, համեստ հարսի նման կատարում էր հօր պատուէրը: Պօղոս աղան շատ անգամ գոհ օրտով խանութի անկիւնում նստած գիտում էր, թէ ինչպէս որդին անուշ վարմունքով, մուշտարիներին էր ճամփում:

Այդ պատճառով մտրւում ասում էր.

— Որդիս ինձանից յետոյ խեղճ չի լինիլ, նըշաններից երևում է, որ լաւ վաճառական է լինելու և իմ աշխատանքս չի վաճակիլ.

Երբ սենեակ մտաւ, տեսաւ կնոջը նստած բազմոցի վրայ, գուլպա գործելիս: Կինը ամուսնու վաղ տուն գալը տեսնելով հարցրեց.

— Ինչո՞ւ այսօր, շուտ տուն դարձար.

Յոգնամ էի. այսօր առևտուրս լաւ էր, մտածելով որ շատ էլ յոյս չկայ իրիկուայ առևտուրից, գարձայ տուն:

Չուտով ծառան հեշտաեւր տուն բերեց: Ըստգլխով խանութ (այսպէս էին անուանում նրան գրացի կանայք) բաժակները մատուցարանով սեղանի վրայ դրեց, թէյ ամեց ու սկսեցին խմել:

Թէյի հետ մի-մի բիշ էլ հաց կերան, որ նրանց ընթրիքի տեղ էր փոխանակում. և Պօղոս ազան թէր ընկաւ բազմոցի վրայ, իսկ Քալուստը բաշուեց կոզրի սենեակը, ընթերցանութիւնը շարունակելու: Երևում էր, որ Պօղոս ազան ինչ որ մի բանի վրայ էր մտածում: Այդ որ նկատեց կինը հարցրեց:

— Ի՞նչ կայ, մարդ, ինչ որ մտածումների մէջ ես.

— Հա՛, ճիշտ որ մի բան մտածում եմ և քեզանից ինչ պահեմ: Մեր Քալուստը անա քսան և չորս տարեկան է, մինչև հիմա նա դեռ ամուսնացած չէ. ասենք նա այնքան համեստ է, որ չի ասել ինձ նշանեցէք, բայց մենք մի թէ չպէտք է հոգանք:

— Մեկըդ նոր ես խոստովանում: Եթէ ինձ լրտած լինէիր, իմ որդին վեց տարի առաջ ամուսնացած կ'լինէր, բայց դու ամեն անգամ իմ առաջ բար էիր նետում զանազան պատճառներ բերելով. փառք Աստուծոյ, ու հիմա դու ինքդ ես ուզում նշանել: Այս օր է, որ մենք ապրում ենք: Չնայելով որ բաւական կարողութեան տէր ենք, բայց աներկա մէջ լինում չ'կայ: Ինչո՞ւ մինչև օրս մենակ մնայի, իմ

հարսը առջևս պտոյտ չգար, իմ այս հասակին կ'սաղի թէյ չինել կերակուր պատրաստել որ ուտենք: Միայն այդ չէ բոլորը: Ամենքն էլ երեսս վար են առնում, թէ ինչո՞ւ Քալուստին չէք պահում, մեզք է հասակն առած տղայ է: Եւ կինը օգտուելով աւիթից, միառմի դուրս թափեց սրտի ցաւերը, ինչ որ տարիքներով հաւարուել էր իւր սրտում. վերջը աւելացրեց.

— Եթէ քեզանից ես յոյս ունենամ, այս բանի օրս ազջիկ ման կ'գամ և մի շատ սիրուն, գեղեցիկ աղջիկ կ'ճարեմ իմ աչքի լոյս Քալուստին:

— Դէ՛հ, ասում ես, այ կին, կարծում ես ես չեմ ուզում որդուս ուրախութիւնը տեսնել. բայց պէտք է նշանը տեղն առնէ: Այն ժամանակ Քալուստը խէրն ու շաւր չէր հասկանում, դեռ երիտասարդ էր, իսկ ով որ իւր գլուխը չի ճանաչում, ընտանիք էլ չի կարող պահել. իսկ հիմա, հիմա բոլորովին ուրիշ բան է:

— Դու որ պահուեցիր, կարծեմ տամուխ տարեկան էլ չէիր լինիլ, պակաս ընտանիք կազմեցիր. թող մեր որդին էլ մեզ պէս լինի:

— Այն ժամանակ, կնիկ, բոլորովին ուրիշ էր: Այն ժամանակ հայրը որդու ձեռքից բռնում կապում էր մի ազջկայ հետ, որին որ յարմար էր համարում, հիմա պէտք է ջահլիլի սրտովը լինի, բացի այդ այն ժամանակ ապրելը ճշտ էր, պահանջներ չ'կային:

Դու ինքդ էլ նկատել ես շուրջդ, որ հիմա շատ

բան է փոխուել: Տարիներ առաջ Գալուստը ուրիշ էր, այժմ ուրիշ է: Ես գտնում եմ, որ միայն հիմա է նրան ամուսնանալու ժամանակը: Գու որևէ ազգիկ չունես նկատի:

— Ազգիան ի՞նչ, հէնց այն օրը մեր ազգիկները տեսան Պետրոսեանի ազգիկը, տեսաւ սիրուն, ա- նարատ ազգիկ է:

— Եթէ այդպէս լաւ ազգիկ է, ես փազը տւր- տէրին կ'ուզարկեմ նրա հօր մօտ, կիմանամ հօր կամբքը, գուր էլ մի երկու օրից յետոյ գնացէք կըր- կին տեսէք:

— Զատ լաւ մարդ, այդպէս էլ արն, մենք էլ կերթանք էլի կ'տեսնենք:

Ճողակաթ խանութը այդ գիշերը ուրախութիւ- նից չընեց: Ամուսնու կամքն իմանալուց յետոյ, նրա առաջ պատկերացաւ որդու ապագան իր բոլոր պար- վութեամբ, նա լաւ գիտէր, որ իւր ձեռքում մեծա- ցած միակ որդին քաղաքի աչքն էր: Նրա համեստ ու պարկեշտ բնավորութեան համար ամենքն էլ սի- բում էին: Ո՞ր հայրը շէր ցանկանալ, որ Պօղոս ա- րամ իւր միակ տղային իր ազգիկը ուզի. . . Ո՞ր ազ- ջիկը բախտաւոր շէր համարում իրան Գալուստի պէս ամուսին ունենալ: Ճողակաթ խանութը լաւ կշռում էր բոլոր հանգամանքը, նա համոզուած էր, որ Պե- տրոսեանցի ազգիկը կտան իրան, եթէ միայն ինքը յօ- ժարի նրանց գուռը չսքել, ազգիկն ուզել. «Ես որ արժան տեսնեմ բարեկամանալ նրանց հետ, նրանք

ուրախութեամբ կտան»: Այս երկու օրս գլուխ կը- բերեմ. կ'կանչեմ մեր ազգիկներին և նրանց հետ կ' գնանք կ'տեսնենք: Այսպէս նա մտածելով ամբողջ գիշերը անբուն անցկացրեց:

II

Երկու օրից յետոյ Կիրակոսեանցի տան մէջ ժողովուել էին երեք կանայք, մայրը իր երկու ազ- ջիկների հետ: Վերջինները, շատ ժամանակ չէր սր ամուսնացել էին:

— Ի՞նչ էք ասում ազգիկներս, ասաց մայրը, իմ կարծիքով մենք դրանից լաւ ազգիկ մեր խարճը չենք կարող գտնել, բոյճով, բուսճով, տեսքճով, սի- րճուն, էլ ի՞նչ էջինի:

— Զատ լաւ է, ապլայ ջան, ասացին ազգիկները, մենք էլ բացի դրանից, ոչ մէկին չենք հաւանի. մա- նաւանդ անցած օրը բազմիքի մէջ էնպէս անկող ման կ'գար մեզի շատ դուր էկաւ, աստղով ազգիկ էր:

Այսպէս, մայրը խորհուրդ էր անում իր ազգիկների հետ, ոգ գնան կրկին տեսնեն ու նշան գնեն, երեք օր առաջ բազմիքում տեսած, հաւանած սիրուն ազ- ջրկան, իր որդի Գալուստի համար: Նրանք սկսեցին ծանր կերպով հագնել իրանց թանկագին հագուստ- ները:

— Տէ՛ օրհնածներ, ասաց նեղացած մայրը, շուտ արէք պրծէք, էդ ձեր հալւեհըրը, աման, էդ ձեր գար-

զարուելը որ հէշ շի քաշուի, մարդ ամենինն անդ չ'երթայ ձեզ հետ:

—Ահան քիշ մնաց, ապլա ջան, հիմի կը պրծնինք, մենք չե՛նք ուզի, որ մէկ ժամ շուտ հալաւ հագնինք, հը՛մը շի լինի, էս մուխմարած դայրէն, էս գիլիֆ-միլիֆը, քո ջուրպիտ պէս շի որ շուտ պրծնինք, պատասխանեց նրանցից մէկը, կրն՝ ճռելով իր ճակատը, մօր բարկութեան դէմ:

Վերջապէս բոլորն էլ հագան իրանց թանկագին հագուստը, ջահել հարսները կապեցին իրենց պլխին սկիւ ու մարգարիտների շարքերը և հեաները առնելով մի շիրիլա, որը պցելու էին օրիորդի պըլխին, «Տէր Աստուած, դուն աջուցես» ասելով ճանապարհ ընկան:

Մի քանի նեղ փողոց անցնելով, նրանք վերջապէս հասան մի լայն փողոց, ուր գտնուում էր ազգկայ ծնողների տունը, որնեց անուանում էին Պետրոսեանց: Նրանք բաւական հարուստ էին և իրանց փորթիկ երկու յարկից շինուած տան զարդարանքի համար, կարելի է ասել, նշինչ չէին խնայել: Հարսնախօս կանայք հասնելով դռան մօտ, բազխեցին դարպասը, որը և իսկոյն բացուեց: Նրանք ներս մտան և առաջին հայեացքով տեսան օրիորդին մօր հետ միասին նստած կար անելիս: Չուշանիկը (այս էր օրիորդի անունը) նրանց տեսնելուն պէս, եղջերու արագութեամբ տեղիցը վեր թռաւ ու կարը ձեռքից պցելով, շտապեց փախչել միւս սենեակը: Քայց

նրա մայրը, քաղցր կերպով ընդունեց հիւրերին և ուրախ ուրախ սիսեց խօսակցել նրանց հետ:

—Է՛հ բարով եկաք, հազար բարի, մեր տունը ձեզի փեշքա՛շ:

—Ո՛ղջ լինիս, մենք էլ հէնց քեզ հիւր ենք եկել. քեզ հիւրեր պէտք չե՛ն, ասաց տղի պառաւ մայրը:

—Բարով հազար բարի եկաք, ինչի՞ չէ, կրկնեց ազգկայ մայրը և կանչելով փոքր այգկան իր մօտ, տկանջից ծածուկ ասաց.

—Գնա մեծ քրոջ պատ, որ շուտով շորերը փոխէ, դսնաւուր շորերը հագնի, ու սրանց համար լաւ գայֆայ եփէ, թէ որ ջարդած շարար չ'կայ, դու ջարդէ, ու երբ որ ամեն բան կ'պրծնիք, առաջ կ'բերես որ ձեռքերը պարէ ու յետոյ երթայ դայֆայ բերէ:

Այսքան ծածուկ պատուէր տալուց յետոյ աղջկան, դարձաւ դէպի նորեկները ու հարց ու փորձ անելուց յետոյ, ճանաչեց նրանց ով լինելը և ինչ նպատակով շնորհ բերելը իր տունը, թէև առանց հարցնելու էլ ինչպէս գիտենք, նա լաւ գիտէր նրանց դալու նպատակը:

Քառորդ ժամից յետոյ սուրճը պատրաստ էր: Մօր տուած պատուէրի համաձայն մեծ աղջիկը լաւ հագուստները հագած, իր փոքր քրոջ յետևից ընկած, մի շնորհալի կերպով եկաւ համբուրեց նրանց ձեռքերը: Հարսնախօս կանայքը այս միջոցին իրարու մտիկ տալով և իրանց սրտում մի անսովոր հոգեկան զարկ գգալով, ուրախութեան ժպիտը փայլեց նրանց

դէմքերի վրայ: Այս հոգեկան հարուածի գրողումով, փեսացուի մայրը շուտով վեր կացաւ տեղից ու մօտը ունեցած պատրաստի շիրիլէն պցելով հարսնացուի գլխին, ուրախութեամբ ասաց. «Աչքերս լոյս, էս տառուտը ամենքի տունը էդնի»\*):

Հարսնացուի մայրը առաջուց լսած լինելով նրա որդու բարի համբաւը և իր ամուսնու յոթարութեամբ ու նրանց ծխատէր բահանայի միջնորդութեամբ, իր ազգկան նրանց տղին տալու խօսք տուած լինելով, ուրախ դէմքով նրանց ձեռքերը բռնելով, կրկնեց միևնոյն խօսքերը:

— Մինչև հիմա, խնամի ջան, մենք իրարու հետ փառք Աստուծու, էլի տես ու ծանօթ էինք, սրանից յետոյ էլ աւելի լաւ կ'լինինք. բարով մէկ օրը գայ հեշտ է, շարունակեց փեսացուի մայրը, Զողակաթ խանութը:

— Ինչո՞ւ չէ, հազր հասած աղջիկ, ես ձեզանից լաւին չեմ գտնի: Սրանից էլ լաւ խնամութիւն, պատասխանեց հարսնացուի մայրը, յարգելով խնամու ասածը:

Սուրճը եկաւ. վեր առան ամեն մէկը մի մի բաժակ ու սկսեցին խմել. միայն այս միջոցին նրանց աչքին ոչ սուրճը և ոչ մի թանկագին իր չէր երեւում, միայն իրենց երկնքում պտրած ու երկրում

\*) Սովորութիւնն այսպէս է: Նախ աղայի կողմից կանաչը աղջկան տանք, բաղանիքում, եկեղեցում կամ մի այլ տեղում տեսնում են, հաւանկուց յետոյ, ծնողների հաճութիւնը առնում, ապա երկրորդ անգամ նշանակած ժամանակին գնում են առաջ բերել տալիս և շիրիլէն զցում:

գտած պարզին էր, որին կանգնեցրել էին իրանց մօտ: Ուստի շտապեցին գատարկել բաժակներն ու շարունակել խօսակցութիւնները, հարսնացուի մօր հետ: Հարսնացուն բերեց մատուցարանը, ժողովեց բաժակները ու տարաւ գուրս և շուտով վերադառնալով կանգնեց նրանց մօտ: Փեսացուի մայրը մի քանի խօսակցութիւններից յետոյ, հարց առաջարկեց հարսնացուի մօրը, թէ երբ կարող են «հարսընտես» ու «փեսատես» անել և խնդրում էր նրա հաճութիւնը:

— Ինչո՞ւ չէ, ինչպէս որ կ'ուզէր, խնամի խանութ ջան, մենք ուրախ ենք, աշխարհը ինչպէս, մենք էլ այնպէս, պատասխանեց հարսնացուի մայրը:

— Ի հարկէ աղջիկ տղայ կ'նշանենք, որ քէֆ ուրախութիւն անենք:

Այսպէս մտքեր փոխանակելուց յետոյ, համաձայնութեամբ, օրեր նշանակուեցին հարսնատեսի և փեսատեսի համար, որը լինելու էր մէկը միւսից հրկու շաբաթ յետոյ: Սրանից յետոյ, մի ժամի շափ էլ հարսնախօս կանայք խնամի Մարիամի (այս էր աղջկայ մօր անունը) հետ խօսակցելուց յետոյ, վերկացան տեղերից, հագան իրանց վերարկունները և համբուրվելով հարսնացուի ու նրա մօր հետ, բաժանուեցին միմեանցից: Տուն հասնելով, անմիջապէս ծառային ուղարկեցին իրանց կրտսերը, աւետելու ապաներին այս ուրախայի լուրը:

Երեկոյեան վաճառական պարոնները սովորա-

1001  
2263

կանից կանուխ փակելով իրանց կրպակը, շտապեցին տուն: Այս երեկոյ նրանց միակ խօսակցութիւնը հարսնացուին տեսնելու և նշան դնելու վրայ էր: Գանայք մանրամասնաբար պատմում էին թէ, ինչպէս առաջ բերին հարսնացուին կիթ է ինչեր խօսեցին մօր հետ և այլն: Գայուստը այս միջոցին զլուխը քարշ արած, լուռ ու մունջ լսում էր միայն նրանց խօսքերը, առանց ձայն հանելու, որ չ'ատեն թէ «աչք ու երեսը բացուել է»:

III

Անցաւ այս օրից երկու շաբաթ, հարսնտեսի համար նշանակուած օրը մօտեցաւ: Պետրոսեանցի կինը մի քանի օր առաջ տեսել էր իր պատրաստութիւնը: Նա հրաւիրել էր տուն իրանց բարեկամներին մի քանի ջահել աղջիկներին, որ նրանց օգնելովը, ամեն բան կարգի տակ դնէ: Տանտիկնութեան պաշտօնն էլ յանձնել էր հացթուխ նունոյին, որը բաւական հմուտ էր խոհարարական արհեստի մէջ: Երկու օր առաջ, նա իմաց տուեց իրանց կողմի բարեկամներին, որ հարսնտեսի օրը, շնորհ բերեն իրանց տուն: Մի կին էլ ուղարկեց խնամիկների տունը և հրաւիրեց նրանց բարեկամների մի քանի աղջիկներին, որ նոյն երեկոյ իրանց տանը եղած աղջիկների հետ ուրախութիւն անեն:

— Տէ, քէֆ արէք, ուրախութիւն արէք, միայն

կ'ինդրեմ, որ առաւօտ շուտ գարլժնիր քներկցո ու ինչ որ պակաս պըռատ ունիք հոգար, ինչ որ ունինք, շունինք, մէկ կարգաւորենք, ասաց քաղցրութեամբ Պետրոսեանցի կինը:

— Գու բոլորովին դարդ մի անէ Մարիամ ապլա, մենք այնպէս պատիւ տանք, այնպէս հարկ հոգանք, որ դու էլ հաւանես, ու խնամանք էլ զարմանան, պատասխանեցին մեր պարծենկոտ օրիորդները:

Միւս օրը հարսնտեսի օրն էր: Յերեկը նշանակուած էր կանանց համար, իսկ գիշերը տղամարդիկներին: Առաւօտ ժամը 12-ը լրացել էր, որ Պետրոսեանցի դահլիճում, անթերի հաւարուել էին նրա կողմի բոլոր կանայքը: Մի քիչ յետոյ երևացին խնամուհիք, փաթաթուած իրանց վերնազգեստներում: Աշուղները կանգնեցին սրահում, նրանց երգելով ներս հրաւիրելու: Սրահում կանգնած ծառայուհի աղջիկներին յանձնեցին պահելու նրանք իրանց վերնազգեստները ու իրանք դիմեցին դէպի դահլիճը:

Դահլիճը զարդարուած էր եւրոպական ճաշակով, ոչինչ խնայողութիւն չէր գործ դրած նրա զարդարանքի համար: Երկու կողմի կանայք էլ իրարու բարեկուց յետոյ, հրաւիրուեցին նստել արգէն պատրաստուած սեղանների շուրջը: Սեղանների վրայ դրուած էին, հաց, պանիր, ձուկ, ափսէ, պատառաքաղ, սփրօց, մի քանի համեմունքներ և այլն:

— Տէ, ձեզ զուրբան, միք կայնի, թէկ էրէք

բերէր, մի ձայն շնորհաց ծառայող օրիսրդների ա-  
կանջում:

Սկսուեց օրիսրդների գործունէութեան հան-  
գէտը: Բերին կերակուրները մէկը միւսի յետեից,  
համարեա միևնոյն կերակուրներն էին, սրճեր սո-  
վորաբար ծանօթ էին ամենքին:

— Զանձ, Աստուած սիրէր, էս ինչպէս հաց  
անուշ կենէր, ե՛հ, մէկ տեսէր մենք ձեր տունը սր  
գանր, ինչպէս ախորժակով կուտենք. դուր, դուր,  
մանաւանդ խանութ մայրիկ, հարս ապրա ջան, հօ  
կուշտ չէ՞ր, դէ, անուշ արէ՞ք Աստուած սիրէր, բար-  
ձրը ու սոխպողական ձայնով ասելով Պետրոսեան-  
ցի կիներ, հրաւիրում էր ուտելու:

— Կուտենք, կուտենք, էլ ուտելն ինչպէս կլինի  
խանութ ապրա ջան, էստից էլ լաւ ուտել, պա-  
տասխանում էին հիւրերը:

Հացկերոյթը վերջացաւ, սեղանները տարան:  
Աշուղները երգելով ուրախացրին կանանց խըմ-  
բին: Մի բիշ յետ սուրճ բերին. վեր առան ամենքը  
մի մի բաժակ և շարախառն խմեցին: Երկու կող-  
մի խնամուհիներն էլ անհամբեր սպասում էին հարսի  
առաջ բերելուն: Աշուղները կանչուեցին միւս սե-  
նեակը, ուր հարսնացուին դուգել, կոկի, պատրաս-  
տի կանգնեցրել էին: Աշուղները երգելով «բացուիր  
նագելի» երգը, առաջ շարժուեցին և հարսնացուն  
մի ընկերուհի աղջկայ հետ ներս մտաւ դահլիճը:  
Ընկերուհի աղջիկը պարկեշտ կերպով կանանց խըմ-

բին գլուխ տալուց յետոյ, միառմի սկսեց համբուրել  
նստող կանանց ձեռները: Նրա օրինակին հետևում  
էր հարսնացուն: Ձեռքերը համբուրելուց յետ, հարս-  
նացուին կանգնեցրին իր սկեսուրի մօտ: Այս ժամա-  
նակ միւս կանայք, մտիկ էին տալիս նրա գեղեցկու-  
թեանը, դէմքի գծապատկեանը, հասակին և այլն և-  
այլն: Հարսնացուին առաջ բերող աղջկան, փեսայի  
մայրը ընծայեց մի քսաննոց սսկի:

Տեսարանը փոխուեց: Առաջ բերին խնամի-  
ների բերած ընծաները սինիներով, որոնք լիքն էին  
փախաւայով ու շարալամայով: Բացի այդ, իւրա-  
բանչիւր կին հանեց իր ծոցից ու գրեց բերած սի-  
նու վրայ իր ընծան հարսնացուին, որը մի քսաննոց  
սսկի, սրը մի պաճախի սսկի և այլն և այլն: Սակայն  
փեսայի մայրը բացառութիւն էր կազմում, որովհե-  
տե նա իր հարսին բերել էր տաններկու մահմուդիայ  
սսկի, մի ազամանդ մատանի, մի սսկի տուփ և մի  
ատաղ շիքիլա: Այս բոլոր ընծաները յանձնեցին  
հարսնացուի մօրը պահելու համար, իսկ սինիները  
տարան դուրս միւս սենեակը: Աշուղները ածեցին  
պարի եղանակ և սիրուն աղջիկները սկսեցին ձեռք  
ձեռքի բռնած պար գալ և երբեմն էլ մենակ էին  
խաղում: Ով լաւ էր խաղում, վարձատրվում էր մի-  
այն «սպրիտ» գովասանական բառով: Քէֆն ու ու-  
րախութիւնը շարունակուեց մինչև երեկոյ, այնու-  
հետև երեկոյեան թէյը խմելով ու մի մի ափսէ  
շարալամայ բաժին ստանալով, պատրաստուեցին

գնալու իրանց տները: Իւրարանշիւր կին ստացաւ. անի՛նաս իր պահ տուած վերնազգեստները և կըրկնակօշիկները: Վերջապէս մի անգամ էլ տեսան և համբուրեցին իրանց հարսնացուին ու բոլոր բարեկամուհիներին «մնար բարով» ասելով հեռացան:

### IV

Երեկոյեան ժամը տանն էր. Պետրոսեանցի լայն ու ընդարձակ դահլիճում նստած երկու կողմի բարեկամների խումբը, զուարճանում էր աշուղ Համբոյի քաղցրահնչիւն նուադարանի ձայնով ու երգերով. դահլիճում զոյնզգոյն լամպեր էին վառվում: Գրտից մտիկ տուղի աշքին այդ բոցավառ լոյսը ընկնելու պէս, խոխոյն իմանում էր, թէ այդ տեղ ինչ ուրախութիւն է թագաւորում: Այդ էր պատճառը, որ բիշ յետոյ, ամբողջ քաղաքում լուր տարածուեց, թէ «Պետրոսեանց Յովսէփ ալի տունը այս գիշեր մեծ բալ կայ»: Խնամիր հետեւելով նորամուտ սովորութեան, բերել էին իրանց հետ նաև փեսացուին, որը զարգարուած նստել էր ընկերների մօտ: Երկու, երկու բաժակ թէյ խմելուց յետոյ, սկսուեց պարախաղը: Աշուղները աժում էին նոր եղանակ «աըընկի» ու երիտասարդները մէկը միւսի յետևից փոք ընծայելով աշուղներին, խաղում էին ընդարձակ դահլիճում: Երկու ժամից յետոյ, Պետրոսեանցը տեսնելով որ հանդիսականները քաղցած են, հրամայեց

ծառայողներին հացկերոյթի պատրաստութիւն տեսնել: Սեղանները առաջ բերին, սրնց վրայ շարուեցին, բացի ուտելիքից, նաև առատութեամբ գինու և արագի շէր:

— Տէ, արիր, բաւական է խաղար, հաց ուտելու ժամանակ է, ձայն տալով իրարու հանդիսականները, նստեցին սեղանի շուրջը:

Կերակուրները բերին հեղհետէ մէկը միւսի յետևից, սեղանակիցները լիք բաժակները ձեռքերին, «կեցցէ՛ներով» ընտրեցին իրանց համար կառավարիչ և նրան էլ որպէս օգնական նշանակեցին մի սուրբչին:

— Եղբայրներ, շնորհակալ ենք որ մեզ ընտրեցիք, միայն մեր ծառայութիւնը դժուար է. Աստուած ուժ տայ, ասացին կառավարիչը և օգնականը, գատարկելով պաշտօնավարութիւնը ընդունելու բաժակին:

Մէկի կենացը խմելու, կառավարիչը խոխոյն գզալի դարկով կամ ձայն տալով լուռ էր կացնում խմբին, հրամայում էր բաժակները լցնել և յայտնում էր սր պարսնի կենացը խմել: Ամեն կենաց առաջարկելիս, մի քանի խօսքերով բարեմախթութիւն անելով, պատարկում էր բաժակը, որին խոկոյն հետևում էր խումբը: Իսկ օգնականը նայում էր թէ ո՞վ խմել է և ո՞վ չէ: Եթէ պատահում էր չըխմող, խոխոյն բարբրում էր կառավարչին, իսկ սա իբրև պատիժ հրամայում էր ամեն մի չխմած բաժակի փոխարէն, երկու հատ խմացնել: Քէֆերը տաքացած միջոցին աշուղները աժեցին և երիտասարդ-

ներից մի քանիսը երգեցին «Յաճախներ առնունք  
կարարք» յայտնի երգը:

Վերջացաւ հացկերոյթը, սեղանները ժողովեցին  
զուրս տարան: Մի փոքր յետոյ, աշուղները հրաւիր-  
ուեցին միւս սենեակը և այնտեղից «բացուիր նազե-  
լի» երգը ասելով, հարսին առաջ բերին: Հարսնա-  
ցուին զարգարել էին շատ զեղեցիկ շրջազգեստով և  
երեսը ծածկել կարմիր շիջելով: Առաջնորդոյ ազ-  
ջիկը, հարսին՝ առանձին պատրաստուած շարքե-  
զէնների սեղանի շուրջը երեք անգամ պտտեցնելուց  
յետոյ, քահանան մի քանի խօսքով բացատրեց նոր  
զոյգի ամուսնութեան նշանակութիւնը և իմանալով  
նրանցից յօժարակամ նշան դրուելը, պահպանիչ ա-  
սելով, օրհնեց նրանց: Քերթն փեսացուի ծնօղների  
բերած նշանագրութեան մատանին ու բօլը:

Փեսէն՝ Գալուստը իր ձեռքով մատանին անց-  
կացրեց հարսի մատը և բօլն էլ պցեց նրա գլխին:  
«Աչքերս լոյս, աչքերս լոյս», լսվում էր շորս կարմիր:  
Այնուհետև հարսին կեսրարի մօտ կէս ժամի չափ  
կանգնեցնելուց յետոյ, տարան զուրս: Աշուղները  
կրկին շարունակեցին ամել ու երգել զանազան եր-  
գեր: Երիտասարդներից մի քանիսը, երբեմն երգում  
էին ու ձայն պահում: Կիրակոսեանցը չափազանց  
ուրախացած, մատամբ հացի ժամանակ կատարը պի-  
նով տարանալուց, մատամբ էլ իր սիրելի սրբին  
ու հարսը իր աչքի առաջը տեսնելուց, սոխակ էր  
զարձել: Երբ աշուղները աւարտեցին իրենց երգը,

երիտասարդները տեսնելով, որ Կիրակոսեանցը չա-  
փազանց ուրախացած է, խնդրեցին նրանից, որ  
Ղարսի երգերից մի երկու տուն երգէ: Կիրակոսեանցը  
թէև սկզբում չէր համաձայնում, սակայն զիջանելով  
երիտասարդներին, համաձայնեց: Ղար առաւ գլխար-  
կը, թուրը կուլ տուեց, բողազը մարրեց ու մի երի-  
տասարդական աշխոյժ ստանալով, երգեց իր ջա-  
հել ժամանակ Ղարսում սովորած հետեւեալ երգը:—

«Ես վարէն կուգայի գուն գուռը բացիր,  
Չեռբդ ծոցդ տարար, ախ էրիր լացիր,  
Ես էլ քեզի չառայ, տունը մնացիր,  
Գնա, զապրլ խային, հար չ'եղար ինձի:

Ելի ես կայնել աչացս դիմաց,  
Աչք ունքս քեզ տեսաւ, խելք, միտքս գնաց,  
Քեզ բարեխօս լլլի սուլթան սուրբ Մինաս,  
Գիւզալին կ'սիրես դիս մի լայնի»:

— Զան, ջան, էլի ձեր Ղարսը, ձայնեցին այս  
ու այն կողմից հեղիօրէն:

— Հա, էլի մեր Ղարսը, հըլպըթ օր, փիրօլ,  
էյ գիտի ժամանակ, խոր հառաչանքներ զուրս տա-  
լով սրտի խորքերից, ասաց Կիրակոսեանցը:

— Տէ, աէ, չեղաւ, չեղաւ մէկ երգ էլ դու ա-  
սն, Յովսէփ աղն, էստից լաւ ժամանակ էլ սրտեզ  
պիտի գաննեք, չէ սր դու աւելի խաղեր շատ գի-  
տես, ասաց սա Պետրոսեանցին:

— Ղարսցիէր, հն, հն, լաւ կ'ըսէ Յովսէփ աղա,

բան, բան, հագար չ'եղնի քէֆ անել, խաղ ասել  
գիտենանք կը, ձայնեցին երիտասարդները:

Գետրոսեանցը յիշեց իր երիտասարդութիւնը,  
նրա սիրտը նոյնպէս լցուեց հագար ու մի մտածո-  
ղութիւններով, ուստի

—Օ՛ֆ, վագուց է ձէնս չեմ փորձել, հրմը ինչ  
անեմ, ձեր խաթրը չեմ կրնայ կտտրի ասելով, եր-  
գեց հետեւալը.—

«Բանի մէկ, բանի քաշեմ գարգերդ,  
Գարգերուս գարման, վե՞ պիտի էզնի,  
Կանչեմ, հառաչեմ, կողկողալով լամ,  
Լալով արտասուներս, ծնով պտիր էզնի:

Բիւրբիւլն եմ գուլամ իմ վարդիս համար,  
Բացուեր է խօնչան, փաթթուել է խար.  
Մէկ պագրմ կուգեմ կրխնայես կը շիտ տար,  
Գիտես թէ պարպիկը սնով պիտիր էզնի:

Ճիտս թեամանդ, բցեմ արևուզ զուրբան,  
Էրթամ գարիպ տեղեր, շատ էնիմ ֆիրդան,  
Փօզը գեօշակ էնեմ, քարերը հօրդան,  
Չկայ գլխուս տակը բարձ, ի՛նչդ էնեմ»:

Գրալօ, փիրժ, շատ լաւն էր, ծափահարեց խումբը:

—Հրպը տեսար, էլ ի՛նչ նազ ու տուզ կենէ-  
իր ազպէր, թո խաղդ իմինէս աւելի լաւն էր, ասաց  
Կիրակոսեանցը, համբուրվելով խնամու հետ:

Երկուսի մտքերն էլ թռան Ղարսում անցկացրած

ուրախ, զուարթ, անհոգ անցած օրերի վրայ: Հա-  
րիւրաւոր երանի էին տալիս անցած զնացած օրերին:

Գրանից յետոյ կրկին սկսուեց պարախաղը, որը  
տեկց մինչև արշալոյսի բացուելը: Առաւօտեան  
թէյը բաժանեցին երկու երկու բաժակ, մինչև արե-  
գակի ծագելը, այնուհետև պատրաստուեցին տան  
զնալու: Աշուղները սրահում աձում և երգում էին  
նրանց ճանապարհ ղցելու համար: Բարեկամները ի-  
րարու ձեռք խփելով և մնաք բարով ասելով, հեռա-  
ցան: Չ'մոռացան նաև սովորութեան համաձայն,  
փողեր ընծայել աշուղներին, տանտիկնոջը ու նրանց  
ծառային:



Այս օրից կրկին անցաւ երկու շաբաթ, փե-  
սատեսի օրը մօտեցաւ: Փեսայի մայրը, որ անտե-  
սութեան մէջ բաւական վարժուած կին էր, շուտով  
հոգաց իր բոլոր պատրաստութիւնները: Մի բանի օր  
առաջ հաւարեց իր տանը բարեկամների մի բանի  
ջահել աղջիկներին իր աշխատանքին մասնակցելու  
համար—այսինքն գաթայի խմոր հունցելու, տունը  
լուանալու, մաքրելու և այլն և այլն:

—Տէ, ձեզի մատաղ, աղջիկներս, աշխատեցէք էն-  
պէս իստակ, լաւ բան արէք, օր հէշ չեղած, ձեզի  
տեսնեմ հա, ինչ շնորհք որ ունիք թափեցէք, տես-  
լով յորգսրում էր աղջիկներին բաներ պատրաստելու:

Մէկ խօսքով ամեն զործ պատրաստեց ու այնպէս կարգի գրեց, որ փեսատեսի օրը ոչ մի նեղութիւն չբաշէ ու խնամոց առաջ ամօթով չ'մնայ:

Եկաւ փեսատեսի նշանակուած առաւօտը. Կիրակոսեանցը հրաւիրատոմներ ուղարկեց իր բարեկամներին հրաւիրելու իրանց տուն: Փեսայի մայրը պատուէր տուեց տանտիկնոջը (խոհարարուհին) վառել թոնդիքները ու կերակուրների պատրաստութիւն տեսնել:

— Աման հոգուց մատաղ, Մանան բաջի, բանի կարող ես լաւ բաներ եփէ, համով լինի, որ ուտողը չկշտանայ, հարկերս ջուրը չ'ձգենք, յաճախ կրկնու՞մ էր սա տանտիկնոջը:

— Ջանմ էդ ինչ կրտես, խանում բաջի, ես կուզեմ, որ իմ անունս խարար անեմ, հէջ եղած բան է, պատասխանեց տանտիկինը:

Առաւօտեան ժամը տասը լրանալու մօտ էր, Պետրոսեանցի տանը հաւարուած նրա բոլոր բարեկամուհիները, կարգադրեցին իրանց, փեսացուի համար տանելիք, բնձաները:\*) Ընծաներից իւրաբանչիւրը առանձին սինու (բոլորածի պղնձեայ սկուտեղ) վրայ դրած, իրանց ծառաների հետ ուղարկեցին խնամոց տունը, պատուիրելով, որ խօնը

\*) Պերջին տարիներում, բարեկամների կողմից ընծայ տանելը թէ հարսին և թէ փեսային, վերջացած է: Ընծայ տարվում է միայն թէ փեսայի ու թէ հարսի ծնողների կողմից միայն: Բացի դրանից հիմայ փեսատեսին և թէ հարսնատեսին կանայք խօնը, միտաին են գնում տրգամարդիկներին հետ:

խնամոց յանձնելիս, յայտնեն, թէ ո՞ւմ կողմիցն է ուղարկած: Ծառաները կատարեցին խնամուհիներին պատուէրը: Փեսայի մայրը ամեն մէկ ընծայատար ծառային, պարգևագրում էր 20-30 կոպէկ փողով:

Ժամը մէկին, փեսատես եկող կանանց տուտը պրծաւ. մօտ քառասուն կանայք ու քսան էլ օրիորդներ, իրանց գոյնզգոյն թանկագին վերարկուները հագած, ներս գնացին Կիրակոսեանցի տան սրահը: Դրան մօտ կանգնած էին մի քանի օրիորդներ, նորեկներին ծառայութիւն անելու համար: Աշուղները երգելով, առաջնորդեցին նրանց դէպի դահլիճ: Դահլիճը շատ զեղեցիկ զարդարուած էր: Պարսկական թճանկագին զարդեր քարշ էին արած պատերի երեսից. երկու մեծագիր հայեղիներ նոյնպէս կանգնեցըրած էին միմեանց հակադիր պատերի մէջ տեղը: Այստեղ հարս ու աղջիկներ ողջունելով իրարու, նստան արդէն առաջուց պատրաստած հացի սեղանների շուրջը:

— Սալլի, Զուշան, Տիրուն, ապրիք դէհ, ձեզի տեսնեմ թէ ի՞նչդ պիտի կառավարէր, հօյնայ տանիր, առանձին ասաց փեսացուի մայրը, իրանց կողմի ջահել օրիորդներին:

Սկուտեց աշխատասէր օրիորդների գործունէութեան հանդէսը: Նրանցից ամեն մէկը մի-մի մատուցարան ձեռքին առած, վազում էր խոհանոցը կերակուրներ բերելու հիւրերի համար: Կերակուրները կարգով իրարու յետևից բերուեցին: Առաջ բերին

խորոված, տապակած ձուկ, շխրթմա, տօլմա, խնձորով դեօշամա և ամենից վերջը փլաւ։\*) Ախորժակով վայելում էին հիւրերը այդ համեղ կերակուրները, ուրախ-ուրախ խօսակցելով իրարու հետ։

— Տէ, Աստուած սիրէք, անուշ արէք, խնամտիր ջան, էդ կ'նշպէս հաց կուտէք, ախորժակով կերէք, ասում էին հացկերոյթի ժամանակ Կիրակոսեանցի կողմի կանայք, իրանց հիւրերին։

Վերջացաւ հացկերոյթը, կանայք վերկացան իրանց տեղերից ու նստեցին պատերի տակ շարուած աթոռների վրայ։ Սպասաւորները մի քանի բոպէնում հացի մանրուկները, ափսէրը ժողովելով, սեղանները տարան դուրս։ Հացից յետոյ, սուրճ բաժանուէց, որից իւրաքանչիւրը խմեց մի մի բաժակ։ Սրանից յետոյ, առաջ բերին փեսացուին զարդարուած հագուստով. սա համեստ ու քաղաքաւարի գլուխ տալով, սկսեց իւրաքանչիւրին ողջունել և յետոյ գնաց կանգնեց իր զորանչի մօտ։ Զորանչը համբուրեց փեսայի երեսը ու հետը խօսելու առիթ տուեց։ Միւս կանայք աչքերի տակով շարունակ նայում էին փեսային և ուշի ուշով ըննում, թէ չունի որևիցէ պակասութիւն, որ իրանց տներում բամբասեն ու բերաններին ծամոց շինեն։

Վերջը առաջ բերին խնամիկների ընծաները ու կարգով շարեցին սեղանների վրայ, բոլոր կանանց ցոյց տալու համար։ Մի ճարտիկ կին առաջ եկաւ

\*) Փլաւ սովորաբար կերակրների վերջն է բերվում։

և ընծաները բաց անելով ցոյց տուեց, ասելով.—

— Տէ, տեսէր, էս սինին խանում քրոջս է. էս էլ Եղսափ ապրայիցս է, էս աղա աղբօրանցս է, էս խանում ապրայինն է և այլն և այլն, հետը բերել է մի գլուխ շարար, շալվարցում շուխայ, մէկ դրափէ շափխայ և այլն և այլն։

Այս ժամանակ խնամիկների կողմից միայն լսվում էին «չէն մնայ» բառերը։ Բոլորի բերած ընծաներից ամենաթանկագինը հարօի մօր բերածն էր, այն է փեսայի համար նա բերել էր մի պալտօցու մահուտ, մի արխալուցու բուրսօ ու մի արծաթ ոսկեղօժ բամբար։ Այս բոլոր ընծաները կանայք տեսնելուց յետոյ, մաղթեցին Աստուածանից, որ «բարով մաշէ», այնուհետև փեսայի մայրը ժողովել տուեց ու տարաւ պահելու։

Աշուղները հնչեցրին նուագարանի ձայները ու քսկսեցին բարձրաձայն երգեր ասել։ Հասակաւոր կանայք փող էին ընծայում նրանց, եղանակը փոխելու համար։

— Ուստա ջան, շի էգնի որ խի փարէն առնես, պարի եղանակմ շալես, աղջիկները թոպ մի բիշ պար խաղան, փող տալով, ասաց մի պառաւ կին։ Աշուղները ածեցին մի կանացի պարի եղանակ ու սիրուն, ընթոյշ օրորվները սկսեցին հերթով պարել դահլիճում։

— Աղբիս, սիրուն աղջիկս, մէկ տեսէր է. կ'նշպէս կ'խաղայ, ասում էին կանայք լաւ խաղացողին։ Զարունակուէց պարախապը մինչև երեկոյ։ Թէ-

յից յետոյ, իւրաքանչիւրին բաժանեցին մի-մի բա-  
ժին շարարլամայ (կոնֆէթ), որոնց վրայ գրուած  
էր երկու խնձոր ու մի գաթայ: Այնուհետև կա-  
մաց-կամաց պատրաստուեցին գնալու տուն, որով-  
հետև ժամը 9-ին, սկսուելու էր տղամարդկանց փե-  
սատեսի հանդէսը:

## VI

Արդէն երեկոյեան ժամը 9-ը լրացել էր: Կի-  
րակոսեանցի տանը անթերի հաւաքուել էին նրա  
բոլոր բարեկամ տղամարդիկը ու անհամբեր ուզատում  
էին խնամիների գալու: Կիրակոսեանցը փեսատեսի  
հանդիտին շրեկութիւն տալու համար, հրաւիրել էր  
երգելու աչրդ Ջիւանուն\*) նրա ընկերակից Ջամարու  
հետ: Աշուղները ածում էին: Նստողները լսում էին  
Ջիւանու երգերը և ուրախանում: Մինչ այսպիսի ու-  
րախութեան մէջ էին, մէկ էլ մի շշուկ բարձրացաւ  
թէ «խնամիները գալիս են»: Իսկոյն աշուղները դահ-  
լիճից դուրս գնացին սրահումը, խնամիներին ներս  
բնդունելու համար: Բոլորը ստրի կանգնեցին, երկու  
կողմի բարեկամները սխեցին իրարու սղջունել:—

— Բարով, հաղար բարի, եկար մեր տունը,

\*) Աչրդ Ջիւանին բնական Աբաղբալաբի Կարգախ գիւղիցն է,  
օժդուած է մի տաղանդաւոր բանաստեցծ աշուղի ձեռքով: Պէտքէ ա-  
սել որ Աղէքսանդրապօլում նա մեծ հաշակ ունեցաւ, ուր ինքն էլ իր  
երգերով գարկ տուեց ժողովրդի առաջնացուցիկանը: Այժմ արդէն  
Ջիւանու բոլոր երգերն հրատարակուած են զբքերով և նա ամեն հա-  
յարնակ քաղաքում վաչիւում է ժողովրդի սէրն և համոզութիւնը:

խնամի ջան ասելով, Կիրակոսեանցի մարդիկը հրա-  
ւիրեցին նորեկ հիւրերին իրանց մօտ աթոռների վրայ  
նստելու:

Պետրոսեանցին նրա հասակակիցների հետ, նըս-  
տեցրին գահլիճի ծայրում, Կիրակոսեանցի մօտ, որպէս  
պատուաւոր տեղ: Գալուստը — փեսան — նրանցից  
ամեն մէկին սղջունելուց յետոյ, գնաց աչրդ Ջիւանուն  
խնդրեց, որ եղանակը փոխէ ու իր երգերից մէկն  
երգէ: Աչրդ Ջիւանին փոփոց եղանակը ու երգեց  
հետեւեալը.—

«Գու այն երկրէն մի հեռանար, Հայի ճնւտ,  
Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան,  
Մրօած ժամանակդ կ'րաղես օգուտ,  
Գեռ մոխրի մէջ թաղուած հին կրակներ կան:

Բնակուած երկիրդ սուրբ է Հայ եղբայր,  
Հայի արնով ներկուած է ամեն քար,  
Զոհուել են հաւատի և ազգի համար,  
Պառկած հալաքաւոր նահատակներ կան:

Ջիւան, ազգիդ հաւաւարիմ ծառայէ,  
Տեղը եկաւ, մինչև կեանքդ ընծայէ,  
Հայրենիքիդ վրայ լաւ աչքով նայէ,  
Իւր մէջ հոգեբուզիս աւերակներ կան»:

— Զան, ջան, Ջիւանի ջան, փիրճ՛լ, ձայն տու-  
ին շորս կողմից մարդիկ:

— Ջիւան ջան, Ջիւան, հոգուդ մատաղ, մէկ

բամանշիղ անկաջները քաշէ, ու մէկ ուրիշ երգ բոս, խնդրեցին բոլոր խմբի մարդիկը:

Աշուղը բաղաբաւարի պատասխանեց.

— Գլխիս վրայ, էս սահաթին ու ջուլմակի լարերը ձգելով երգեց, հետևեալը.—

«Սի աշքերուդ, ազեզ ունըրուդ մատազ,  
Մեզրից ու շարարից անուշ հայ աղջիկ.  
Վարդագոյն այտերից միշտ գեղածիծաղ,  
Քայլրդ կարաւի պէս ընքոյշ, հայ աղջիկ:

Ի՞նչն է պարանոցիդ ոսկեզէն զարդը,  
Կարծես Անահիտն է մասը մակարդը.  
Պատկերիդ նկատող երիտասարդը,  
Կլինի խելաքար, ապուշ, հայ աղջիկ:

Գրաւիշ խօսքերով իմ հոգեհան,  
Քոնի սիրել կ'տաս մարդկանց սիրեկան,  
Պտոյտ տարդ անմեզ աղաւնու նման,  
Զարժուածքդ խոհեմ, զգոյշ, հայ աղջիկ»:

— Ապրիս, ապրիս, Ջիւանի, կրկին ամեն կողմից լրսուեցին ձայներ:

Գիշերուայ ժամը 12-ին Կիրակոսեանցը հրամայեց ծառաներին, հացկերոյթի պատրաստութիւն տեսնել: Պատրաստեցին հացի սեղանները բոլոր հարկաւոր պաշարներով:

— Տէ համեցէք, համեցէք, հերիք խաղին ալկանջ անէք, ըիշ էլ հաց անուշ էրէք, ձայնեց Կիրա-

կոսեանցը իր բոլոր բարեկամներին, հրաւիրելով նրստեկ սեղանների մօտ:

Կերակուրները բերում էին մէկը միւսից յետոյ: Սեղանների վրայ շարուած էին առատութեամբ գինու և արաղի սրուակներ: Ընտրուեց կառավարիչ, որի հրամանով, ամենքը լցրին բաժակները գինով և առաջի անգամ նուիրեցին փեսայի և հարսի կենացը, երկար ու բարակ մաղթանքներով: Յետոյ սկսեցին հերթով խմել ամենի կենացը: Ով որ կեանքումը գինի խմած չէր, նա էլ խմում էր համարձակ, սեղանակիցներից յետ չ'մնալու համար:

— Աստուած սիրէք, խմէք, ինչքան որ կրնար, բեասէն, գինի շատ ունինք, փառք Աստծու, ասում էին Կիրակոսեանցի բարեկամները, նոր խնամիներին:

— Հէշ դարդ միք էնի, վախենար չպարպէնք, էնքան խմենք, որ գուր էլ բեզրիք, պատասխանում էին երիտասարդները:

Փեսայի հայրն էլ թէև սովորութիւն չունէր գինի խմելու, բայց խմրից շրջատուելու համար, մի բաժակ գինի լցրեց ու առաջարկեց իր բարեկամների բաղդաւորութեան համար:—

— Գլխդրեմ ողորմած Աստծուց, մեր բարեկամութիւնը մինչև մեռնելներս հաստատ պահէ, միշտ հանապաղ իրարու հետ սիրով ապրինք, ամեն ժամնակ Լսողս Քրտարով քէֆ էնենք, մեր կեանքը երկար լինի, թոյ թշնամին տրաքի:

— Ամէն, ամէն, գոչեցին բոլոր նստողները:

Առակն ասում է «Սա գինի է, թան չէ, ամեն մարդի բան չէ»։ այդպէս էլ եղաւ, խումբը կատարեալ արբեց, այնպէս որ էլ ուտելու և խմելու ախորժակ չ'կար։

Հացկերոյթից յետոյ, խումբից, ամեն ցանկացող փող էր ընծայում աշուղներին և խնդրում երգել իր սրտի սիրած երգը։

Աշուղները ուրախութեամբ երգում էին։ Մի կտոր աչրգ Ջիւանն էր երգում, մի կտոր նրա ընկեր ուստայ Ջամարին։ Երգելով բաւականութիւն ստանալուց յետոյ, հանդիսականներից մի աշխոյժ երիտասարդ, փող ընծայելով աչրգ Ջիւաննին, ամեն տունեց «տըրքնկի» պարը և ինքը սկսեց պարել։

— Տաշի, տաշի, ծափահարելով ձայնեց խումբը։

— Ջան, ջան, փիթոյ, հերթը բեզ, հոգուզ մեռնիմ, լսվում էր խմբի կողմից։

Այսպէս հերթով խաղացին բոլոր երիտասարդները։ Ամենից վերջը առաջարկեցին փետային խաղալու. փետան վեր կացաւ տեղից, բաղաբաւարի պլախ տուեց ամենքին ու սկսեց պարել արագ ու գեղեցիկ, բան թէ միւսները։

— Բրաօ, տաշի, ծափահարում էին նրա հասակից ընկերները։

— Ապրիս, վայելես, Գարուստ ջան, լսվում էին միւս կողմից։

Այսպէս պարելով, երգելով, ուրախանալով անցկացրին ամբողջ գիշերը, մինչև արեգակի ծագելը։

— Օ՛հ էս ի՛նչ, արևն էլ ծագեց, դէ, ձեզ մատաղ վեր կացէք գնանք, ձայնեցին մէկը միւսին,

— Սպասեցէք, ի՛նչ կշտապիր, դեռ մարդիկ թէյ անգամ չեն խմել. թող թէյ խմեն, հանգստանան։ Թէ մի րիչ էլ շուտ գնացիր ի՛նչ, մէկ չէ, հա մեր տունը, հա ձեր տունը, մօտենալով, ասաց նրանց Կիրակոսեանցը, համոզելով սպասել։

Թէյը խմելուց յետոյ, խումբը պատրաստուեց գնալու։ Գարուստը, նրա հայրը և իրանց բարեկամները նրանց ճանապարհ ձգեցին այսպիսի խօսքերով.

— Բարձով եկաք, հազար բարի, մեզի շնորհնար և այլն, և համբուրելով բաժանուեցին իրարուց։

Աշուղները կանգնած բազի դրան տուաջ, երգում էին — «Ահա եկանք, դարձեալ կերթանք, բարով մնաս հալէպ բաղաք» և ճանապարհ էին պցում։ Խընամիներից իւրաքանչիւրը մի մի բան ընծայում էր նրանց։

## VII

Փետատեսից և հարսնատեսից մի շաբաթ յետոյ, մի օր Պետրոսեանցի կիկը՝ Մարիամը նստեց իր ամուսնու մօտ և ասաց. —

— Այ մարդ, լաւ ուրախութիւն, լաւ ըէֆ արինք պրծանք. չէ՞ որ մեծ պարտքը մնացել է։

— Ի՛նչ պարտք, չ'եղնի ջէհէլի համար կ'խօսես. շնտ բան կայ պակաս։

—Ի հարկէ, զեռ ինչ ունինք հազիր արած: Այնրան պակաս կիսատ բաներ կան:

—Այ կնիկ, դու միամիտ եզիր, ամեն բան էլ ինչ որ հարկաւոր է կառնեմ, մենակ մենք մեր լեհեպի չափ պէտքէ ստներս երկարացնենք:

—Ես էլ շեմ ուզի, որ մենք մեր չափից աւելի բաներ անենք, մենակ ինչ որ հարկաւոր է, պէտք է առնենք, պատրաստենք օր առաջ անպատճառ:

—Քլխիս վրայ, դու ինձ մէկ մէկ ասա, ինչ է պակաս և ես կ'գրեմ, պատասխանեց մարդը:

Այսպէս նրանք խորհուրդ արին ցուցակագրեցին թէ ինչ կայ պատրաստի, ինչ է մնացել առնելու, կարելու և այլն: Մի բանի օրից յետոյ, Պետրոսեանցը ուղևորուեց զէպլի Թիֆլիս, ուր գնեց ու բերեց իր աղջկայ համար զանազան մետաքսեայ կտորներ և շատ հարկաւոր բաներ: Նրա կինը՝ որ միշտ հաշվում էր թէ հարսանիքին չորս ամիս է մնացել, մարդի բերած կտորները ստացաւ թէ չէ, ուրախանալով հրաւիրեց իրանց տուն բարեկամների ջահել աղջիկներին, որոնց խորհրդով, կտորները չափ ու ձև անելով, կտրատեց ու ամեն մէկին մի մի բան տուեց կարելու, որ իր ժամանակին օժիտը պատրաստ լինի:

Ժրաջան օրիորդները, ինչպէս սեպուհ պարտականութիւն, ուրախ սրտով, զիշեր ցերեկ, շարունակեցին կարել, առանց մի տրտունջի նշան ցոյց տալու: Նրանց, մանաւանդ աւելի ոգևորում էր հարսի մօր

փաղաքշահան խօսքերը, որոնք շարունակ կրկնում էր:

—Ապրիք աղջիկներս, բարով գուր էլ նշանուիք, ձեր ջէհէզը սուրիշները կարեն:

Վերջապէս երեք ամսուայ ընթացքում ամեն բան աւարտեցին: Մի բանի մանր մունր բաներ էլ, ինչ որ պակաս էր, գնեցին Աղէքսանդրապօլում: Մնաց միայն հարսանիքի վերջնական օրը որոշելը, որի համար իրանց խնամու հետ, քեասաբիշի\* էր հարկաւոր անել:

Ուստի մի երեկոյ, նա հրաւիրեց իր տուն խնամի Կիրակոսեանցին, կնոջը և մի քանի մօտիկ ազգականներին յատկապէս քեասաբիշու (կտրական խօսք) համար: Հացկերոյթի ժամանակ Կիրակոսեանցը խօսք բանալով, հարցրեց.—

—Խնամի ջան, երբ կրնանք մեր հարսին տանի, հարսանիք երբ կրնանք անի:

—Երբ որ կամենար. ես պատրաստ եմ, կըր ձեր կամքը կուզի, ես չեմ հակառակելու:

—Չառվարով գտնք պտակին, բանի տղամարդ բերեմ հետս, բանի կնիկ մարդ:

—Խնամի ջան, շատվորով գալուդ բան չեմ ասի, մենակ իմ կողմի բարեմամներս էլ շատ են, էնպէս անենք, որ լաւ բաւականութիւն տեսնեն ամենքն էլ. թէ չէ, վայ թէ տեղերս սեպումած լինի, չ'կրնանք լաւ քէֆ ցոյց տալ:

\*) Քեասաբիշի թուրքերէն բառ է, նշանակում է կտրական, վերջնական խօսք տանել:

— Ես էլ կհասկնամ քու գրութիւնդ. կաշխատեմ էնպէս անել, որ լազաթը չհորշի, թէև դժուար բան է. ում ասեմ թէ պտակվոր միք գայ:

— Տես, խնամի ջան, ես լագաթի համար կասեմ, թէ չէ դու գիտես, ում որ կուզես բեր, ինչպէս լինի մի իրիկուն է, եօրայ կ'տանենք:

Այսպէս մի բանի խօսակցութիւնից յետոյ, վերջնականապէս խօսուեց և որոշուեց հարսանիքի օրը, բանի մարդով խնամոնց կողմից պտակվոր գալը, թէ կին ու թէ տղամարդ և այլն և այլն:

Մի ամիս էր մնացել նշանակուած օրուան, ուստի հարսի ազգականները, մտածելով, որ Ջուշունիկի հարսանիքի օրը մօտենում է, որից յետոյ, երկար ժամանակ զրկուելու են նրա տեսութիւնից, սկսեցին հերթով հրաւիրել իրանց տուն, պատուելու համար: Ամեն ազգականի տանը, նշանուած Ջուշանիկը, մնում էր ոչ աւելի երեք օրից, իսկ վերջի շաբաթում, նա մնաց իր տանը:

Այս շաբաթում նրա մայրը բարեկամ ազգիկների հետ անդադար չարշարվում էր հարսանիքի պատրաստութեան համար: Ջուշանիկն էլ օգնում էր նրանց հարկաւոր գէպրում: Փետայի մայրըն էլ նոյպէս այս շաբաթում մեծ շարշարանքի մէջ էր: Գիշեր ցերեկ աշխատում, քրտինք էր թափում հարսանիքի պատրաստութեան համար. նա էլ հրաւիրել էր իր տուն իրանց կողմի բարեկամներին ազգիկներին, որ մասնակցեն իր աշխատութեանը. — այսինքն — գա-

թայի համար ալիւր մազեն, բրինձ խտակեն, տունը մաքրեն և այլն: Պատրաստել էր տուել նոյնպէս հարսին տանելու համար մի զոյգ ոսկի ապարանջան, մի զոյգ ոսկի օղամանեակ և տաներկու մահմուդեայ ոսկի:

### VIII

Հարսանիքի նախընթաց շաբաթ առաւօտ, Կիրակոսեանցի կինը *խնորակ* ուզարկեց իր բարեկամներին տունը, իմաց տալու, որ վաղը հարսանիքին շնորհ բերեն երեկոյեան ժամը 8-ին, իր որդու պրսակի ուրախութեանը մասնակից լինելու: Քաւորի տունը զնալիս խնդրակը (նշանակում է խնդրող) տարաւ հետը փետայի մօր տուած խօնը, որ բազկացած էր մի բանի ընծաներից: Թէ բաւորը ու թէ միւս բարեկամներն էլ սիրով ուրախութեամբ ընդունեցին հրաւերը ու խօստացան անպատճառ միւս օրը, ներկայ լինել հարսանիքի հանդիսին:

— Աստուած սուրբ պտակին արժանի անէ, ասում էին ամենքը խնդրակ կնոջը:

Երեկոյեան Կիրակոսեանցի տունը հաւաքուած ազգիկները հինայի\*) խօնը գլխներին գրած, գալուզ գուռնայով երկար պարելուց յետոյ, փետայի

\*) Մի վաղնի սովորութիւն է, հարսանիքների նախընթաց օրը ուզարկում են փետայի տանից հինայ հարսի տանը, ուր հուտքուած ազգիկները ու կանայք ուրախութիւն են համարում ձեռքերը ներկել հինայով: Այս սովորութիւնը այժմ անհետանում է հետզհետէ:

մայրը խնդրակ կնոջ ու մի ուրիշ տղի հետ, գավոււ գուռնայով ուղարկեց հարսի տունը: Այնտեղ, հարսի տանը նոյնպէս հաւարուած էին իրանց կողմի բարեկամների ազջիկները, սրտնր անհամբեր սպասում էին հինայի խօնին:

—Ազջիկներս, ջահել էք, խաղացէք, բարով հերթը ձեզի գայ, ձեր խօնն էլ ուրիշները խաղացնեն, ասում էր հարսի մայրը, գնելով խօնը ազջիկների գլխին:

—Ապրիր, ապրիր, ասում էին միւս կողմից, խօնը խաղացնող ազջիկներին:

Բաւական խօնը խաղացնելուց յետոյ, վեր առան տարան ներս, իսկ հարսի մայրը փողեր բաժանելով գուռնաձկներին, խօնը բերող կնոջը ու տղային, ձանապարհ գցեց:

**IX**

Միւս օրը կիւրակի էր. առաւօտ ժամը իննը, արեգակը իր ոսկեղօծ ճառագայթները սփռել էր երկրի վրայ, Կիրակոսեանցի դռանը ածում էին գուռնաձկները մի բարձր անձանեթ եղանակ: Հաւարուել էին երիտասարդ ընկերները, փեսային բազանիք տանելու համար: (Սովորութիւն է, բաւորը հարսանիքի առաւօտեան, փեսային մի քանի ընկերների հետ հրաւիրում է բաղանիս լողանալու համար, բոլոր ծախքը ինքը կատարելով): Ամենքը սպասում

էին բաւորի գալուն: Փեսան որոշոււմ էր բոլոր խրմրից նրանով, որ նա հագել էր ամենագեղեցիկ հագուստներ ու բուլը կապել, մի ապրեչումէ թաշկինակ:

Քաւորը կկաւ:

—Բարով, բարով, բաւոր ազն, ի՞նչ եղար, ո՞ւր մնացիր, աչքերս ջուր կտրու, ձայն տուին ամենքը:

—Մի բիշ գործ սնէի տղէքը ջան, ներեցէք, գիտէք, տէ, ձեզի մատաղ, շուտ էրէք կուշանանք, երթալուն աչէք, շտապեցնելով ասաց բաւորը:

—Երթանք, երթանք, ձայն տուին երիտասարդները և դիմեցին դէպի բաղանիս:

Ջուռնաձկները ածեցին նոր եղանակ, սրտնց ձայնը լսոււմ էր քաղաքի ամեն անկիւնում:

Բաղանիքում բաւական լողանալուց յետոյ, բլուսայ քսուեցին հերթով:

—Չուտ էրան, ասպապ կանչէ, դուրս երթանք ասում էին լողացող պրծնողները, քիսայ քսող մարդին:

—Էո սահաթ, ասում էր մարդը և բարձրաձայն կանչում—ասպապ\*):

Հետզհետէ ամեն լողացող փաթաթում գուրս կկաւ շորերը հագնելու:

—Տէ, արիք բիշմ հաց ուտենք, ասաց փեսան և հրաւիրեց նստելու խմրին, բաղանիքում նախաճաշիկ անելու:

\*) Ասպապ բառը թուրքերէն է, նշանակում է հանգերձ: Երբ ուր բառը լսոււմ է բաղանիսում, դուրսը ծառայողներից մինը, իսկ կոյն առնելով ծածկոց, գլխեկապ, կրեւրբիշ, մի զոյգ սանտալներ (փաշտեայ հոգաթափ) ու ներս տանելով, փաթաթում է լողացողին:

—Վայ, սաղ էզնի, բու մէրդ բու գլխիդ, Գալուստ ջան, տես, մեր փորի գարդն էլ է քաշել, ուտելու հաց է ուղարկել բազմիր:

—Նստինք, նստինք, ուտենք, խմենք, ամեն կողմից ձայնեցին և նստեցին նախաճաշիկ անելու:

—Խմենք բաւորի կենացը, Աստուած գործին յաջողութիւն տայ, ողջ էզնի, երկար կեանք ունենայ:

—Խմենք Գալուստի կենացը, Աստուած սուրբ պտակին արժանի անէ:

—Խմենք ազապների կենացը, Աստուած նրանց էլ մուրազներին հասցնէ:

—Խմենք ամենքի էլ կենացը, Աստուած ամենքիս էլ գործին յաջողութիւն տայ:

Այսպէս կենացներ առաջարկելով, բաւական խմեցին, կերան, կշտացան և ախուհետե վեր կացան գնալու տուն: Զուռնաճիւղները կրկին ամեցին մի բարձր եղանակ ու խումբը ընկած նրանց յետևից, փեսայի հետ վերադարձան տուն:

Փեսայի գռանը մի ժամի չափ էլ կենտապար խաղալուց յետոյ, բաժանուեցին, ամեն մէկը գնաց իր տուն հանգստանալու ու հարսանիքի համար պատրաստուելու: Առաւօտուայ ուրբախումբիւնն էլ այսպէս վերջացաւ:



Ճաշից յետոյ, ժամը մէկը լրանալու մօտ էր: Հարսանիք հրաւիրուած աղջիկները կամաց կամաց

սկսեցին հաւաքուել Գիրակոսեանցի տունը:

—Արիք, արիք, ձեզ մատաղ, ասում էր փեսայի մայրը և համբուրում ամենքի երեսը:

Երեկոյեան դէմ, Պետրոսեանցի կինը, թմբուկով ու փողերով (գաւուլ զուրնայ) մի կնոջ և մի տղայի հետ ուղարկեց յատուկ փեսի համար պատրաստած «շապիկի ու վարտիքի» խօնք, որի վրայ բացի շապիկից ու վարտիքից, կային նաև մի քանի տեսակ շարքերգէններ: Հաւաքուած օրիորդները գլխաւորների վրայ գնելով, բաւական ժամանակ խաղացին, որից յետոյ, փեսայի մայրը փող ընծայելով դավուլ զուռնայ ածողներին, խնդրակ կնոջը ու տղային, ճանապարհ գցեց:

—Ճորհակալ ենք, սաղ էզնիս, շէն մնայ օճազդ, ասելով նրանց, հեռացան:

Երեկոյեան ժամը ութն էր: Երկու կողմի բարեկամների տանն էլ անթերի հաւաքուել էին հրաւիրուածները: Փեսայի տանը հարսանիք եկողներից ամենից մեծ ընծայ բերողը բաւորն էր, որին յարգելու համար, նստեցրել էին գահլիճի վերևի կողմը, աչրի ընկնող տեղում:

Քաւարը բերել էր ընծայ հարսին տանելու համար, մի շրջագգետ, մի ատլաս շղարշ, մի բազդատի, մի գոյգ կօշիկ, մի գոյգ գուլպայ, մի գոյգ ձեռնոց և մի գոյգ կերտն:

Զուրնաչիները ածում էին պարի եղանակ և երիտասարդները խմբով, պարում էին միասին: Եւկ-

երկու բաժակ թէյ բաժանուեց հիւրերին: Եկաւ ծխատէր քահանան տիրացուի հետ ու հրամայեց առաջ սերել փեսայի նոր հանդերձները, օրհնելու համար:

— Տէ, շուտ էրէք, որ շուտ պատրաստուենք, քան որ շուտ չ'մնանք օրհնածններ, գիտէք մեր քաղաքը, ասաց քահանան:

— Հն, հն, ճշմարիտ կասէ, տէր հայրը շուտ էրէք, պատրաստուեցէք, կրկնեցին շատերը քահանայի սօսքերը:

Փեսայի հանդերձները օրհնելուց յետոյ, քահանան քաջալերական ու գրաւիչ խօսքերով, հրաւրեց երիտասարդներին, հալաւը գնելու ասելով. —

— Տէ, ձեզ նայեմ ազապ երիտասարդներ, սրբատա կ'սիրէք մեր Քալուստին:

— Բոլորս էլ կսիրենք, ձայնեցին ամուրի երիտասարդները առաջ գալով:

Սկսուեց աճրպախօսութիւնը հանդերձներին\*)

Երիտասարդներից որը յիսուն կոպէկ, որը ւթսուն կոպէկ, որը մէկ ուրբի էր առաջարկում, կերջապէս հետզհետէ բարձրացնելով գները, հասուստները գնեց մի երիտասարդ երկու բուրբի յիսուն կոպէկի, որից քահանան փողերը ստանալուց

\*) Ամուրի (աղայ) երիտասարդների կողմից աճրպախօսութիւն լինում հարսանիքի մէջ, փեսայի հանդերձները գնելու. փեսային ով ստ է սիրում, նա էլ աշխատում է ինքը գնել, աւելացնելով առաջարկած գինը: Առաջարկած փողը մնում է քահանայի օգտին, իսկ գնող երիտասարդը կռուում է ազապապաշի (ամուրիների գլխաւոր): Վերջինս սպանում է փեսայի հազուստները:

յետոյ, շորեցրեց իր առաջ, մի «պահպանիչ» ասաց, շնորհաւորելով նրա ազապապաշուկիւնը, յանձնեց նրան փեսայի հազուստները. վարսավիր հրաւիրուեց, որը եկաւ փեսային հանգիստաւոր կերպով թրաշեց, երեսի մազերը: Այժմ հերթը եկաւ հազուստները հագցնելուն:

— Տէ, հեռու կեցէք, կարգը իմն է, թագաւորի հալաւները պէտքէ օրհնեմ և հագցնեմ ասելով, առաջ եկաւ ազապապաշին:

Փեսային մերկացրած (միայն չապիկը ու վարգիկը հագած է լինում) կանգնեցրին դահլիճի մէջտեղը, երիտասարդների խումբը շրջապատեց նրան, գունձաշինները ածեցին և ազապապաշին սկսեց գովելով հագցնել փեսայի հազուստները: Իւրաքանչիւր կտոր հագցնելիս, շրջապատող խումբը ներգաշնակ կերպով, միասին երգում էր հետեւեալ տաճկերէն երգը. —

«Այ նազլինան նազլինան,  
Քեապապ րիշար քեօզնան,  
Ըս եարանլարն սեօզլինան  
Գեաթըն չուխայի գէյտըրն:

Հայ գէյտըրն գէյտըրն,  
Բիլմազ իսա րիլտըրն.  
Օղան հալալ դատասան,  
Ղօրխարամ հալտատայասն»:

Երբ այս երգը աւարտում էին, ամուրիների

զլխաւորը, առնելով ձեռքը հազուստներէց մէկը, բարձր բզափում էր.—

—Տէր-հայր, օրհնեան տէր, ժողովուրդ լսեցէք, տեսէր մեր թագաւորն ինչ ունի:

Ամուրիները հարցնում էին—

—Ի՞նչ ունի:

—Մեր թագաւորը մէկ լաւ արխալուզ ունի, Փարիզու կտորն է, Եւրոպի բամբակն է, Լօնդօնի դործուածն է, Մոսկովի կարածն է և այլն, ասենք շնորհաւոր:

Խումբը բզափում էր—«Աստուած շնորհաւոր անէ» և երգում.

«Ասենք շնորհաւոր, ասենք շնորհաւոր,

Մեր թագաւորի արխալուզը շնորհաւոր»:

Այս կերպով գովելով, հագցնում էր հազուստները: Գրանից յետոյ, քահանան օրհնեց փեսային, կանգնեցրեց մօտը, աւետարանը զրեց նրա կրծքին և սկսեց մի փառաւոր ծագման ասել տիրացուի հետ: Բոլոր հարսանիք եկողներն էլ, հերթով առաջ էին գալիս, նախ համբուրում խաչը, աւետարանը ու յետոյ փող ձգում տիրացուի ձեռքին բռնած ափսէի մէջ: Այսպէս բաւական փող հաւարուեց երկու սեռից, յօգուտ քահանայի և տիրացուի:

Ծագմանը վերջացնելուց յետոյ, առանց ժամանակ անցնելու, քահանան «մնար խաղաղութեամբ» ասելով, գնաց եկեղեցի, սպասելու փեսայի և հարսի գալուն:

XXI

Քառորդ ժամից յետոյ, Կիրակոսեանց Պօղոս ազան ձայն տուեց հանդիսականներին պատրաստուելու, որ գնան խնամու տունը հարսին տանելու: Մի մարդ էլ ուղարկեց Պետրոսեանցի մօտ, իմաց տալու որ շուտով իրանք գալու են:

—Տէ, շուտ արէք, պատրաստուեցէք գնանք, լսուեցին ձայներ ամեն կողմից: Բոլորեքեան վեր կացան տեղերից և ով որ հարսնաւ գնալու էր, պատրաստուեց գնալու: Հարսնաւ գնացողներին բաժանեցին մի մի փորրիկ մեղրամօմ, ճանապարհին վառելու համար:

Քաւորի բերած կերոնները վառեցին, մէկն աղապաղաշին իր ձեռքն առաւ և կանգնեց փեսայի աջ կողմը, իսկ միւսը մի տղայ բռնեց ու կանգնեց փեսայի ձախ կողմը: Հարսնացուին տալու բոլոր ընծաները փեսայի մայրը դարսել էր մի մատուցարանում ու տուել էր մի ջահել տղայի, որ հետները տանին:—

—Տէ, լաւ աշէք, հօ բան, ման շէք մոռացել, բոլորը հազիր արէք, գնւք էլ, ասաց Կիրակոսեանցը, դառնալով դէպի միւս կողմը:

—Չէ, չէ, էլ բան չունինք, դուք առաջ ընկէք, մենք էլ ահան կ'գանք, ասաց Կիրակոսեանցի կինը:

Զուրնաշինները ամեցին մի բարձր եղանակ, որ համարեա զգրգացնում էր ամբողջ բազարը:

Ամենից առաջ գնում էր մի մարդ ձեռքը բռնած մի վառած մաշալլայ (բոցաւառ լոյս) ճանապարհները լուսաւորելու համար: Նրա յետեից կարգով գնում էր փեսան, շրջապատուած հանդիսականներով: Զուրնաշինները ածելով գնում էին փեսայի առաջ ընկած. իսկ ամենից վերջը նազելի բայլերով գնում էր իզական սեռի խումբը: Հարսնառ գնացողները բոլորն էլ ունէին ձեռքերին վառած մոմեր: Երիտասարդները ճանապարհին տեղ տեղ կանգնեցնելով զուրնաշիններին, նրանց ճակատին սպիտակ փողեր կպցնելով, ածել էին տալիս «կենտապար» և իրանք փոխ առ փոխ պար էին խաղում, երբեմն էլ համրուրում փեսայի ճակատը: Վերջապէս հասան խնամոնց դուռը:

— Տէ, մի բիշ կայնէք, մենք էստեղ պէտք է խաղանք, ձայն տուին երիտասարդները:

— Ծօ, ուստա Կակոս Աստուած սիրես տրնկու մէկ լաւ եղանակ շալէ, ասաց երիտասարդներից մէկը, կպցնելով զուռնաշու ճակատին սպիտակ ազատի: Զուռնաշինները ածեցին ու պարը տարացաւ: Բաւականին երկար պարելուց յետոյ, Պետրոսեանցի կողմի բարեկամները ներս հրաւիրեցին բոլորին: Տան սենեակներում, երկու սեռի համար էլ առանձին առանձին հացկերոյթի սեղաններ էին պատրաստուած, որոնց վրայ դրուած էին հետեւեալ կերակուրները. — հաւ, գառ, ձուկ, խորոված, կարագ, պաթայ, փախլաւայ, տեսակ տեսակ մրգեր, զինու

և արագի շիշեր և այլն և այլն:

— Բարով, հազար բարի, եկար դուք մեր գլխին, մեր երեսին, իրարու համբուրելով, ասում էին խնամիները:

Տղամարդիկ շրջապատեցին սեղանը հաց ուտելու, փեսային աղապաշու հետ կանգնեցին սեղանի մի ծայրում, երկու կերոնակիրները կողքին:

Պետրոսեանցի մարդիկը նորեկ հիւրերին ծառայութիւններ էին անում, անդադար զինի բաժանում և ստիպում սր ուտեն, խմեն և ուրախութիւն անեն: Երբեմն այս ու այն կողմից փեսին պատանեւեր էին «համեցէք» անում. իսկ ազապաշուն ծագրելու համար, մէկը ասում էր, «տղերք, աղապաշին ինչ ուտէ» միւսները ծագրում էին «հաւ ուտէ» յետոյ «գառ ուտէ» յետոյ «խոզի միս ուտէ» յետոյ «ցաւ ուտէ» և այլն և այլն զանազան ծագրածութիւններ:

Մինչդեռ սրանք այսպիսի ուրախութան մէջ էին, միւս սեռեակում, հարսի ընկերուհիները շրջապատած հագցնում էին նրան և արցունք էին թափում, ըստ որում մի բանի բողբոջ յետոյ, ընդ միշտ զրկուելու էին իրանց զուարճախօս ընկերուհու տեսութիւնից:

Իսկ հարսնացուն տխրել էր նրա համար, որ չուտով թողնելու էր իր հայրական տունը, որի մէջ մանկութիւնից սնուել, մեծացել էր, մանաւանդ երբ մտաբերում էր ծնողներին, եղբայրներին ու քոյրերին, իր գուարթ ընկերուհիներին, ուստի երբեմն

նրա աչքերից արտասուերի կաթիլներ էին գլորվում: Բայց մի կողմից էլ ներքուստ մխիթարվում էր, որ մահում էր նոր աշխարհ ու դառնում մի գեղեցիկ երիտասարդի կին:

— Ինչու ես լաց լինում Ջուշանիկ ջան, Աստուած այն ժամանակ մեզ անիծել է, որ ազջիկ ենք ծնել, ամենքս էլ ուշ թէ շուտ պիտի երթանք, ասելով նրան մխիթարում էին ընկերուհի ազջիկները:

— Լալն էլ կարգ է, երթալն էլ, թող բիշմ լայ, ասում էր միւսը:

Վերջապէս երկու ժամից յետոյ, հարսին առաջ բերին զարգարուած շրջազգեստով ու երեսը ծածկած քօղով: Հարսին կանգնեցրին սենեակի մէջ տեղը, փեսային էլ նրա մօտ: Պետրոսեանցի ծխատէք րահանան, միացնելով երկու գլուխները, «ձեռնադրութեան» կարգը կատարեց, որից յետոյ րահանան «ծագման» սասց ու բաւական փող հաւարելուց յետոյ, նոյնպէս շտապեց եկեղեցի, սպասելու «պակի» կարգը կատարելուն:

Քիչ յետոյ, պատրաստուեցին հարսին ու փեսային տանելու եկեղեցի: Հարսի հայրը մօտ գալով փաթաթուեց նրան, համբուրեց երեսը, յետոյ համբուրեց փեսային ու մի քանի օրհնութիւններ թափեց թէ հարսի և թէ փեսայի գլխին ասելով.—

— Երկայնակեաց լինիր, անվտանգ մնար, աշխարհիս փորձութիւններից ազատ մնար, միտսին ծերանար:

— Ամէն, ամէն, բազդաւոր լինին, ձայն տրուին ամեն կողմից:

Յետոյ համբուրվեց փեսայի հօր հետ ու հետեալ՝ հայրական գլխոտ սրտից բղխած, խօսքերն ասաց.

— Իմ ազջիկս խնամի ջան, բեզ յանձնեցի, բեզ էլ Աստծուն կ'յանձնեմ, սրանից յետոյ, դու ես նրա տէրն ու տիրակա՛նը:

— Անհօզ եղիր, խնամի ջան, էգ լինշ խօսք է. ես էլ իհարկէ ինձ չափով մարդ եմ, անու՛ն ունիմ. ազջիկագ իմ աչքիս լոյսի հետ հաւասար կ'սիրեմ, պատասխանեց համոզելու ձեռք փեսայի հայրը:

Կանայքը դուրս եկան սենեակից, սրտնց հետ և հարսի մայրը, սրբելով աչքերի արտասուները: Հանգէսը կամաց-կամաց դուրս գնաց գիմելու դէպի եկեղեցի, իսկ մի քանի շարածճի երիտասարդներ հարսի ձեռքներին լացացնելու նպատակով, սրտաշարժ եղանակով երգեցին.

«Արդ հրամանան Աստուածային,  
Բազումը եկեալ ընդ փեսային,  
Կալեալ ձեռօք զիս կուտանին,  
Մ'նար բարեաւ, շատ խնդացի ու շատ լացի»:

XII

Հանգէսը շարժուեց դէպի եկեղեցի հետեալ կարգով: Հարսի մի ձեռքը բռնել էր փեսան, իսկ

միւսը հարսնքոյրը\*): Սրանց երկու կողմերից կերսնները ձեռքերին կանգնած էին քաւորը և մի ուրիշ տղայ: Երիտասարդները շրջապատել էին սրանց. իսկ օրիորդները և կանայք գնում էին ետևներից: Ճանապարհին գուռնաշէնները յածելով, երիտասարդները առանձին, առանձին փեսայի և հարսի առաջ պար գալով, հասան եկեղեցի: Ջուռնաշէնները լռեցին, հանդիսականները գլուխները բաց արած, մտան եկեղեցի: Հարսին ու փեսային կանգնեցրին սուրբ սեղանի առաջ, ուր երեք անգամ երկրպագութիւն արին ու յետոյ երկու ծխատէր քահանաները մէկը հարսին, միւսը փեսային խոստովանացրին, եկեղեցու ծէսի համաձայն, որից յետոյ հարսն ու փեսան իրարու մօտեցրին, սեղանի առաջ աջ աջի տալով ու երկուսի գլուխները իրարու մօտեցնելով, քահանան խաչը դրեց երկուսի գլխին: Քաւորը կանգնելով նրանց ձախ կողմը, գլխների վրայ դրած խաչը բռնեց: Քահանան սկսեց սրտակի օրհնութիւնը ու կարգը կատարել:—

Պսակը վերջանալուց յետոյ, հարսանիքաւորները միեկնոյն կարգով, հարսին ու փեսային շրջապատելով, դուրս գնացին եկեղեցուց և գլխեցին դէպի Կիրակոսեանց Պօղոս աղի տունը: Մինչև որ

\*) Հարսնաքոյր ասում են այն կնոջը, որը պսակի օրը հարսի հետ գնում է նրա սկեսրանց տունը, իբրև մօտաւոր անձն նորահարսի, որովհետև հարսը իր համար անձանօթ տան մէջ սկզբից մի քանի օր կարեւորութիւն է ունենում այդ տեսակ առաջնորդի, մինչև ծանօթանալը տանը, սանեցանց և այլն հետ:

նրանք դուրս կ'գային եկեղեցուց, քաւորը, քահանաներին, տիրացուներին, սարկաւագին, լուսարարին, ժամակոշին և այլն փոզեր բաժանեց:

Եկեղեցուց դուրս գնալուց յետոյ, հարսանիքաւորների առաջ կրկնվում էին հետևեալ հետաքրքիր տեսարանները: Յանկարծ տեսնում ես մի մսագործի աշակերտ, մի կենդանի գառ դրած ուսին, բերեց գցեց նորապսակուածների առաջ ու գանակը քսելով իբր թէ կամենում է մօրթել, տսաց.— քաւոր ազն, թագաւորին ու թագուհուն մատաղ պէտք է անեմ այս գառը:

— Լաւ, լաւ, շնորհակալ ենք ասելով, քաւորը փոզ տուեց նրան:

Յետոյ գալիս է մի հացթուխի աշակերտ, տար-տար հալլուն ձեռքին բռնած, մատուցանում է հարսին ու փեսային ու «համեցէք» է ասում: Մէկ էլ տեսնիս մի գլխեգաճառ մի լիքը շիշ ձեռքին առած, եկաւ առաջ ու բաժակը լցնելով, մօտեցրեց սրան ու նրան: Վերջապէս այսպիսի շատ գերակատարներ գալիս գնում էին ի հարկէ փոզ ստանալու նպատակով: Քաւորը, որի վրայ է փոզ տալու պարտականութիւնը, ստիպուած իւրաքանչիւրին էլ փոզեր ընծայելով, արձակում էր: Նրանք շնորհակալութիւն էին յայտնում այս խօսքերով.

— Ողջ լինիս քաւոր ազն, թագաւորի ու թագուհու կեանքը երկար լինի, շատ շնորհակալ ենք:—  
Ճանապարհին հանդիսականները երգելով, պա-

րելով, հասան վերջապէս Կիրակոսեանցի տան դու-  
ռը, ուր կրկին շրջանաձև պար սկսեցին խաղալ:

—Տէ, հերիք է, ներս համեցէր, հարսը մեկը  
է, գաղբած է, կ'մբբի, ցուրտ է, ձայն տուին մի  
քանի կանաչք պարուկներին:—

—Չէ, հարսը նեղեցել է, ձեզանից խռովիլ է,  
չի գալ ներս, ընծայ կուզէ, ասացին ծիծաղելով  
երիտասարդները:

Քիչ յետոյ, առաջ եկաւ հարսի կեսրարը ու  
ձեռքով ներս հրաւիրեց, ասելով.—

—Հարսիս ընծան իմ գլխի վրայ, մի լաւ ալ-  
մաստ մատանի իմ պարտքս է:

Այս խոստումի համաձայն խմբովին ձայնեցին՝—

—Ուռայ, ուռայ, կեցցէ, ողջ լինի հարսի  
կեսրարը ու իրարու սեղմելով, մտան Կիրակոսեան-  
ցի լայն ու ընդարձակ դահլիճը:

Նորապսակուածներին դահլիճում յատկապէս  
հարսի համար պատրաստած սեղանների շուրջը ե-  
րբք անգամ պտոյտ տալուց յետոյ, իրարուց հեռա-  
ցրին. հարսին հարսնրայրը տարաւ կանանց սենեա-  
կը, իսկ փեսային թուղեցին տղամարդկանց մօտ:

Քէֆն ու ուրախութիւնը կրկին տաքացաւ:  
Ջուռնաչիները փոխելով դուռնէքը, բազցրածայն  
փողերը հնչեցրին: Իսկ երիտասարդները երբեմն  
պարում էին, երբեմն երգում: Իսկ մի ժամից յե-  
տոյ, սկսեցին վայելել գիշերային ընթրիքը, ուր  
առաջի ուրախութեան տեղը բռնում էին գլխու և

արաղի առատ շարուած շիշերը:

—Տէ, ձեզի մատաղ, հիմի լաւ քէֆ արէր,  
ուրախացէր, ասում էր Կիրակոսեանցը բոլորին:

Իսկոյն առաջի կենացը ոտքի վրայ կանգնած,  
առաջարկեցին փեսայի ու հարսի կենացը:

—Ո'ղջ լինին մեր նորապսակ թագաւորն ու  
թագուհին, բազգաւոր լինին, երկար կեանք ունե-  
նան, ձայն տուին ամեն կողմից:

Փեսան եկաւ և յայտնեց շնորհակալութիւն:  
Մի պատգամաւոր էլ ուղարկեցին կանանց սենեա-  
կը, ուր յայտնեցին, որ խմում են հարսի կենացը:  
Հարսը ոտքի վրայ կանգնեց և գլխով յայտնեց շնոր-  
հակալութիւն:

Յետոյ խմեցին հարսի ու փեսայի ծնողների  
կենացը, յետոյ քաւորի, յետոյ ազգայ երիտասարդ-  
ների, օրիորդների, կանանց, բոլոր հանգիստական-  
ների և այլն և այլն կենացներ:

Այսպէս քէֆով ու ուրախութիւնով անցկացրին  
ամբողջ գիշերը:—

XIII

Առաւօտ արդէն ժամը տասն էր. Կիրակոսեան-  
ցի տան դահլիճում կրկին հաւարուեցին հանդի-  
սականները, սպասելով խնամքների ջէճէզվոր պա-  
լուն: Կէս ժամից յետ, հեռուից երևացին երկու  
կառք, որոնց վրայ դարսած էին հարսի օժիտը

(ջէՏէգ), կառքերը եկան կանգնեցին Կիրակոսեանցի գրան առաջ: Իսկոյն կառքերից ընդունեցին օժիտը, ներս տարան, գարսեցին, յետոյ կառաւարաններին ու խնամու ծառային փողեր առատութեամբ ընծայելով, արձակեցին:—

Օժիտը վեր առնելուց փոքր ինչ յետոյ, գահ-լիճում ձայն բարձրացաւ թէ ջէՏէգփորները (հարսի ծնողները իրանց բարեկամներով) գալիս են: Ամենքը տեղերից վեր ելան, գնացին դուրս հիւրերին ներս հրաւիրելու: ՋէՏէգփորները ներս մտան թէ չէ, չորս կողմից լսուեց.—

—Քարով, բարով, հազար բարի եկար, սւր մնացիր, ինչո՞ւ ուշացար և պատուով ընդունելուց յետոյ, գնացին ներս—կանայքը կանանց, իսկ տղամարդիկը՝ տղամարդկանց սենեակը: Հարսը կանանց սենեակում կանգնած սպասում էր նորեկներին, որոնք իր ազգականներն էին: Նորեկ կանայք իրանց բարեկամների հետ բարև տալուց յետոյ, իսկոյն գնացին հարսի մօտ համբուրուելու նրա հետ:

—Ժիր եզիր, Չուշանիկ ջան, մի ամաչի, սրանից յետոյ էս է քո տունդ և մի բանի խօսքեր ասացին:—

Սակայն սրտաշարժ էր մօր ու աղջկայ (հարսի և մօր) հանդիպումը: Իրար տեսնելու պէս, իսկոյն փաթաթուեցին և սկսեցին ջերմ համբոյրներ տալ և լաց լինել: Այս դրութեան մէջ մնացին մի բանի բողբ:

Չուշանչիները մի սենեակում և աշուղները միւս սենեակում, հնչեցրին իրանց նուագարանների ձայները, ուրախացնելով հանդիսականներին:

Ճաշը պատրաստուեց: Յոլորեցին սեղանների շուրջը և սկսեցին ուրախանալ ու վայելել կերակուրները: Տղամարդիկ «կեցցեներով» ընտրեցին մի կառավարիչ, որի առաջարկութիւնով, խմում էին գանազան կենացներ: Ի հարկէ առաջի բաժակը նուիրեցին հարսի ու փեսայի կենացը, յետոյ ծնողների, յետոյ օրիորդների, ազալ տղերանց և յետոյ բոլոր բարեկամների և մի քանի ընդհանուր կենացներ:

—Ջան, ջան, շատ ապրիր, քէֆ արէր Ատուած կսիրէր, շարունակ ձայն էր տալիս Պօղոս ազան:

Ճաշը վերջանալուց յետոյ, երիտասարդների առաջարկութեամբ կրկին սկսուեց կենտապարը: Երիտասարդները փոխ առ փոխ խաղում էին և ամեն խաղացող աշուղների ճակատին փողեր կպցնում:

Կանանց սենեակում, ճաշից յետոյ առաջ բերին հարսի օժիտը, հանդիսականներին ցոյց տալու համար: Հարսի մօտիկ բարեկամներից մի կին առաջ գալով, սկսեց մի առ մի ցոյց տալ հարսի բերած օժիտը: Բաց անելով օժիտը, մի առ մի ասաց՝—

—Տեղէր, ինամիր, հարսը եօթը ձեռք ջէՏէգ է բերել.—եօթը բուրոսոյից շրջազգեստ, եօթը փա-

Թուխայ շապիկ, եօթը ծնկաշոր, եօթը ներքնակ, եօթը մահուտ կրպիտոնով դորժած կուրաչկայ, եօթը ջուզտ չուլքի, մի արծաթէ բամար, մի ջուզտ սսկի օդ, մի շերիտ սսկի՝ մարգարիտներով շարած, մի ձեռք բաղանիքի թախում, որէ փէշամալ, ցամբոց, գլխի կապ, երեսորքիշ, մի պղնձէ եօզակ, մի շիրմայի սանտր, մի մկրատ, մի պղնձէ թաս, երեք ջուզտ բաշմարի, մի սնդուկ, մի ասղաբուն մէջը լիբը առեց և այն և այն:—

Յոլոր օժիտը կանանց խումբը տեսնելուց յետոյ, միաբերան ձայնում էին՝—

—Չատ լաւ է, չէն մնայ հարսի հօրն ու մօրն օջաղը, հերթը իրանց տղին էլնի:—

—Ամէն, ամէն, չէն մնայ հարսի հօր օջախը, կրկնում էին միւսները:

Փեսայի մայրը օժիտը բաց անող կնոջը րնծայեց մի քսաննոց սսկի: Տղամարդիկները պարը հետզհետէ տարացաւ: Երիտասարդները չբաւականալով դահլիճի դրուժեամբ, վեր առան աշուղներին հեաները, դուրսը դրանը ածել տուին և այնտեղ լայն ու քնդարձակ ասպարիզում, սկսեցին պարել ու թռչկոտել:—

Նրանց ձեռքին կար մի խնձոր, որի վրայ ամեն խաղապոյ պարտաւոր էր փոյ կպցնել տասնըհինգ, քսան կոպէկանոց: Երբ խնձորը լցվում էր փոզով, գատարկում էին աշուղի գրպանը և նոր խնձոր առնում ձեռքերը խաղալու, կրկին արծա-

թապտում, կրկին յանձնում աշուղներին:

Երիտասարդների «բրավօ, ուռայ» և աշուղներու ածելու ձայնից, հաւարուել էին ահագին բաղմուժիւն, մտիկ տալու սրանց խաղալուն: Երկար պարելուց յետոյ, ամենից վերջը աշուղները ածեցին կլոր պարի սոլորական մի եղանակ և մեր տարացած երիտասարդները ձեռք ձեռքի տուած մի շրջանաձև պար սկսեցին, սր տեղ էլի մի ժամի շափ, որից յետոյ բեղարեյով ներս գնացին:

Միւս սենեակում օրիորդները խորհուրդ արին, որ մի կլոր պար էլ իրանք խաղան, ուստի զուտաշիններին մի «եայլի» ածել տալով, մօտ երեսունաչափ օրիորդներ ու հարսներ ձեռք ձեռքի տուած սկսեցին պար գալ:—

—Աղջի Նինօ, ինչ եայլի որ գիտես, ըս՛ա՛ որ պարին յարմար գայ, թէ չէ պարը առանց եայլու լաւ չէ, ասաց օրիորդներից մէկը իր ընկերուհուն:

—Է՛հ, ամօթ չէ, էսքան մարդ մեզի պիտի մտիկ տան, ես ի՛նչպէս եայլի ըսեմ, ձեռքը բերնին գնելով, համեստարար պտտասխանեց Նինօն:

—Չէ, չէ, ամօթ չէ, խաղ գիտես աս՛ա՛, հարսնիք է եղել, որ քէֆ անենք, ձայն տուին շորս կողմից նայոյ կանայրը:

—Ինչո՛ւ, Նշխունն էլ եայլի շատ գիտէ, թոյ նա էլ ասէ, ես էլ կ'ասեմ, ասաց Նինօն:

—Լա՛ւ, լա՛ւ, ես էլ կ'ասեմ մէկ տուն, դու էլ աս՛ա՛, պտտասխանեց Նշխունը:

Նինոն, որ շատ անգամ պատահել էր այսպիսի պարահանդէսներում և այսօր պարի առաջնորդի դեր էր վեր առել, ձեռքի ազլուխով, երեսը սրբեց ու մի անգամ հազաց և մեղմ ձայնով երգեց.—

«Էս գիշեր երազ տեսայ,  
Արտերը վարած տեսայ,  
Նամուսդ կտրի տղայ,  
Սիրածդ տարած տեսայ»:

Միւս խաղցող ազջիկները միևնույն երգը խրմբովին կրկնելուց յետոյ, Նշխունը երգեց.—

«Այ տղայ, դու հէրիս մէրիս  
Ո՛ւր եկար կէս գիշերիս,  
Ծոցումս տեղ քեզ չ'կայ,  
Գլուխդ դիր կոններիս»:

Նինոն շարունակեց.—

«Այ տղայ դու բաղովն արի,  
Ոտներիդ շաղովն արի,  
Էս թաղը զայմաղալ և,  
Ման եկ էն թաղովն արի»:

Նշխունն երգեց.—

«Ինձոր ունիմ կծած և,  
Չորս կողմը արծաթած է,  
Ազրէրս ուզեց չ'տուի,  
Ասի եարիս զրկածն և»:

Նինոն շարունակեց.—

«Էսօր ուրբաթ է պաս է,

Ծոցում, ար ա՛յլ թատ,  
Տէրտւր քու սրգին մաներ  
Ինչի՞ ասիր չ'հատ»:

Նրանք մի տուն երգելուց յետոյ, միւսները կրկնում էին երգածները դուրեկան ձայնով ու շարունակում պարելը: Կանանցից շատերը նայնպէս նախանձելով օրիորդներին, իրանք էլ մէջ մտան և հետները խաղացին:—

Օրիորդների պարը, մանաւանդ երգերը այնքան հաճելի թուեց տղամարդիկներին, որ նրանցից շատերը բերանները բաց արած նայում էին սենեակի դռնից: Պարը վերջացաւ: Երեկոյեան թէյը բաժանեցին երկու սենեակումն էլ գաթայով, իոկ կանանց, թէյից յետոյ, բաժանեցին մի մի ափս, շաքարլամայ իւրաքանչիւրին, վրան դրած երկու խնձոր ու մի գաթայ:

Մինչև թէյի վերջանալը, արդէն մութը պատեց, ուստի կրակները վառուեցին լուսաւորելու համար:

—Տէ, շուտ արէք, պատրաստուեցէք տուն երթանք, ձայն տուին իրարու խումբը: Ամենքն էլ պատրաստուեցին զնալու:

Տղամարդիկը ստացան իրանց վերարկուները, կանաչը՝ իրանց վերնազգեստները, շալերը: Վերջինները հերթով համբուրեցին հարսին:

—Մ'աս բարով, Չուշանիկ ջան, ժիր կեցիր, ասում էին նրանք:

Հարսի հայրը նոյնպէս մտաւ կանանց սենեակը, համբուրեց իր ազգան, խրատներ տուեց, յետոյ եկաւ փեսային էլ համբուրեց, կրկին երկուսին էլ օրհնելով, իր կնոջ հետ ախուր, մի բան կորուսածի նման հեռացան այնտեղից: Աշուղները կանգնեցին սրահում, կրկին աշրգ Ղարիբի շու երգը երգելով, խմբին ձանապարհ ձգեցին:

Յոյր հրաւիրածները գնալուց յետոյ, երբ դատարկուեց դահլիճը, Կիրակոսեանցը հրաւիրեց իր հարսին դահլիճի մէջ, իր տղի և ընտանիքի հետ պարելու: Աշուղները ածեցին մի կլօր պար, ինքը մի ձեռքը տուեց իր հարսին, միւսը սրդուն, խոկ կինը և աղջիկը նրանց ձեռքերից բռնելով, կազմեցին մի շրջանակ պար ու սկսեցին պարել:

Մինչև գիշերուայ ժամը տասը Կիրակոսեանցը իր ընտանիքով պարելուց յետոյ՝—

—Ապրի հարսս, լաւ կրխազայ, ժիր է, աւելով, վերջացնել տուեց պարն ու փոյ ընծայելով աշուղներին, շնորհակալութիւն յայտնեց.—

—Տղէք, շատ շնորհակալ եմ ձեզանից, աղբիք, մեզի լաւ ուրախացուցիք:

—Մենք էլ ազն, շատ ու շատ շնորհակալ ենք, չէն ու պայծառ մնայ օջաղդ, ասելով, աշուղները գնացին իրանց տները:

Ահա այսպէս վերջացաւ հարսանիքը:

«Ազգային գրադարան»



NL0337927

40694

